Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891.99
4-75

6 NOV 2011

7808
891.99 Գրիգորյան
Գ-75 Հայր Տոդրեան
VII K-7477 29/VI-75թ.

5
Ն-80

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Դ. ՊՐԱԿ

ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ ՀԱՅՈՑ ՏԱՂԵՐ ԵՒ ՈՏԱՆԱՒՈՐՆԵՐ

Կ. ԿՈՍՏԱՆԵԱՆՑ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
ՏՊԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ.
1903

891.99
4-80

891.99
Կ-75
ար.

ՆՈՐ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Դ. ՊՐԱԿ

507

ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ ՀԱՑՈՑ ՏԱՂԵՐ ԵՒ ՈՏԱՆԱՒՈՐՆԵՐ

Գ 8008

Կ. ԿՈՍՏԱՆԵԱՆՑ

ԱԶԳԱՅԻՆ-ՀԱՆՐԱՅԻՆ
Գ. Գ.
ԳՐԱԴԱՐԱՆ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
ՏՊԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ.
1903

2 3 MAY 2013

36527

Дозволено цензурою 13 Января 1903 г. г. Тифлисъ

ՅԱՆԿ

ԵՐԵՍ

«Բան ուրախութեան» Խաչատուր Խարբերդացի . 6
«Ա՜յ անգին Դոհաբ», Յակոբ Սսեցի . . . 9
«Տաղ Երզնկացի Յովանիսէ ասացեալ» . . 11
«Վասն սիրելութեան», Յովհաննէս . . . 16
«Տաղ հարսանեաց և ուրախութեան»,
Մարտիրոս Խարասարցի 17
«Տաղ օրհնութեան և ուրախութեան», Նոյն . 19
«Աստուած օգնէ մեր կնքահօրն», Նոյն . . 22
«Տաղ ի տես սիրելեաց և հեռաւորաց», Նոյն . 24
«Գովեստ Ս. Աստուածածնայ վանաց»,
Մարտիրոս Ղրիմեցի 26
«Տաղ վասն գինւոյ», Ազարիա Զուղայեցի . 29
«Արարիչ Հայր», Նոյն 31
«Տաղ Ադամայ», Նոյն 32
«Թէէն մինչև ի յայրն», Նոյն 34
Առեղծուած Ա—Դ. 36
«Այլ իմն ծածուկ բան» 38

«Վասն սաղմոսի և ժամատեղաց» . . . 40
«Ի Յովսէփ վարդապետէ Աղթամարցւոյ» . 42
«Ոտանաւոր վասն քաջավարժութեան» . . 42
«Կարապետի եռամեծի վարդապետի խրատ». 44
«Զորս են կարգ գիտութեան», Աւետիք Օգոստին. 54
«Տաղ վասն Պետրոսի առաքելոյ երազին» . . 57
«Տաղ ուրախութեան և խաղու» 59
Ծանօթութիւններ 65
Միւս երեք պրակների նիւթը 80
Երգիչների այբբենական ցանկը Ա—Դ. պը. . 83

1.

Բան ուրախութեան

Յորժամ եղև գարուն, եկ պլպուլն այգին.
Տեսեալ զթուփ վարդին ունայն ի նմին,
Տրամեցաւ դառնագին, արտասուէր յուժգին,
Չի ոչ եգիտ անդէն ըզիւր սիրելին:

Սակ նա ցայգէգործն. եղբայր սիրելի.
Յո՞ւր է վարդըս պայծառ, զոր աստէն թողի.
Մինթէ տեսեալ ես դու, տո՛ւր պատասխանի,
Թէ ո՞վ տարաւ զնա, ւ արար զիս գերի:

Բամեալ ծաղկունքն ամէն, զոր աստէն էին,
Հօս կան ամենեքեան ի յիւրեանց տեղին.
Պայծառացեալ ցնծան և ուրախ լինին,
Եւ իմ վարդն միայն չէ նորա մէջին:

Մինթէ գիտակ ես դու զտեղին թ՞ուր գնաց,
Կամ ո՞ր չարկամ եկեալ զնա յափշտակեաց,
Եւ կամ առեա՞լ ես դու զնա յիւր տեղաց,
Եւ տարեալ մատուցեր զնա թագաւորաց:

Այգէգործն տուեալ նմա պատասխան.
Դու մի՛ տրամիր այդչափ, թուչո՛ւն պատուական.
Գնացեալ է վարդդ ի մէնջ նէկէ՝ պէկուման,
Եւ մերձ է ժամանակ նորա գալստեան:

Բամեալ ծաղկունքն ամէն ընդ նմայ էին.
Դոքա եկեալ յառաջ աւետիս բերին.
Եւ մանուշակն եկեալ կարապետ նմին.
Ասեն թէ մուշթուլուխ բերաք պլուլպլուլին:

Եւ նա յորժամ լուաւ զայս յայգէգործէն,
Ուրախութեամբ ցնծայր և ճեմէր անդէն.
Եւ գոհանայր զՏեառնէ նորին Արարչէն,
Զի վութով կատարէ որ խնդրէ յուրմէն:

Աւրհնեաց զայգէգործն և զայգի նորին,
Թէ միշտ կանանչ կենայ բուրաստան քոյին.
Եւ ծաղիօք զարդարեալ անթառամ լեցի՛ն,
Եւ միշտ ցօղ քաղցրագին լիջանէ նոցին:

Լուեալ զգալուստ վարդին և ուրախացաւ.
Եւ վերացաւ ի յօդս, թռչնոցն հասաւ.
Ասէ. Տո՛ւք երանի, սուգ իմ վերացաւ,
Զի վարդս եկաւ այսօր, խնդումն ինձ հասաւ:

Բերեալ զարկին վրան ծաղկունքն հաւասար,
Զի գայ և լիջանէ այն վարդն պայծառ.
Եկեալ վարդն, և տարան պլուլպլուլին խապար.
Ասեն. Քեզ երանի, օմատ թուրի եար:

Այլ նա յորժամ լուաւ զգալուստն վարդին,
Ուրախութեամբ մեծաւ դիմեալ ի յայգին,
Տեսեալ զվարդն բաղմեալ ի մէջ վրանին,
Եւ ողջունեալ զնա, բերկրեցաւ հոգին:

Նստեալ ի վերայ վարդին և գովէր զնա.
Եւ երգս զանազան յօրինէր նմա.

Եւ գոյնզգոյն ձայնիւ եղանակէր նա.
Եկեալ թռչունքն ամէն ի յերգս նորա:

Սկսաւ ասել պլուլպլուլն վարդին սիրով,
Կամիմ զքեզ գովել յերկար և յոլով.
Զի չկայ քեզ օրինակ հոտով և գունով,
Ոչ մուշկ և ոչ էմպէր, ա՛ոչ այլքն համով:

Որ թէ զկնօրօտ մօրօտն ասեն, չէ նման,
Եւ կամ զնոնոֆարն, նէրկիզ և շուշան.
Մուրտ և մարուֆ ծաղկունքն, և էմիր իշխան,
Ոչ մանուշակ ծաղիկ նշանն դարնան:

Ուծեալ ծաղկունքն ամէն, որ յերկրի բուսան,
Ցաւուր երեքշաբթի ի Տեառնէ ստեղծան,
Ծառք և ծաղկունք հաւասար, ամէն զինչ որ կան,
Դուն ես ամենեցուն պարծանք և սուլթան:

Բամեալ ծաղկունքն հաւասար, որ կան ի յերկրի,
Զկայ քեզ օրինակ հանց աղվորակի.
Դու ես զրախտէն եկեալ պարգևք աշխարհի,
Բերեալ հրեշտակն երեսս Ադամայ նախնի:

Այլ դու ես աննման ի վերայ երկրի,
Ոչ լուսին, ոչ ա՛ արեգակն ի քեզ նմանի.
Ոչ ակն, ոչ մարգարտա ճուհար, ա՛ ոչ ոսկի,
Ոչ տապարզի շէքէրն Եգիպտոսի:

Խնկայ ես դուն բերած ի դրախտէն մեղի.
Եւ մեք քեզնով ուրախ եմք յայսմ աշխարհի.
Թագաւորաց ես դու աղերս պիտանի,
Եւ իշխանաց մեծաց ես դու ցանկալի:

Որպէս զմեծ սուլթան ի գահոյս բազմեալ,
Եւ նման թագուհւոյ յառագաստին լեալ,
Դու ես որպէս գշխոյ վառօք զարդարեալ,
Եւ հոյլք ծաղկունաց քեզ սպասաւորեալ:

Ուծեալ ի սէր քոյին կամ քեզ յանգիման,
Եւ բաժանելն ի քէն է ինձ օր մահուան.
Դու ես աչաց իմ լոյս և հոգւոյս ջան,
Եւ առանց քո տեսուդ կեանքս իմ անպիտան:

Թռչունքն ամէն ինձի երանի կուտան,
Թէ զվարդն դու ունիս քեզ ասպնջական.
Զկայ քեզ ծերութիւն, ոչ օր քոյ մահուան,
Եւ ոչ գոյնդ թափի ւ ոչ ապեղանան:

Ես եմ ուրախացեալ ի վերայ քոյին,
Զինչ որ զմեծ սուլթան ի յիւրում թախտին.
Զի դու ես անմման յաշխարհիս մինչին,
Եւ ես եմ քեզի նախ թռչնոցն յեռին:

Այսօր է ինձ խնդումն, և շատլըկ կ'անեմ,
Որ դու ես մօտ ի յիս, և զքեզ տեսանեմ,
Ապա թէ հեռանաս յանկից կուվախեմ,
Որ դամ զքեզ որոնեմ և ոչ գտանեմ:

Նոր արեգակն այսօր ծագեալ աշխարհիս,
Եւ լուսին բոլորած ելջեալ ի յայդիս,
Տեսի աչովք իմովք զլոյս արևիս,
Եւ իմ եւած հոգիս զարձեալ եկին առ իս:

Տե՛ս ծանօթ. 1:

2.

Ա՛յ անգին գոհար
Դու զքաջը գտուար,
Պէհրիեան մարգարիտ լալ քար
Պատկ զքեզ հիւսէ.
Աստուած զքեզ պահէ:

Նիսպաբ անուշահոտ
Քո գլխոյդ մինչ յոտ,
Կանանչ բաժկուն ամուր չես,
Հոտ դու միշտ կանանչ ես.
Աստուած զքեզ պահէ:

Ոսկի սուիերայ
Լալ շարապաղայ
Անկէց առ քեզ ոսկի կուգայ,
Մատանի շինէ,
Աստուած զքեզ պահէ:

Բաղմասաեղն նման
Դու լուսին աշնան
Լուս արեգակ արև գարնան
Զքեզ լուսաւորէ.
Աստուած զքեզ պահէ:

Եղէգ կինամոն
Յիշէ Սողոմոն
Հիրիկ զմուռ Դաւիթ մեռոն
Արքայ զքեզ օծէ.
Աստուած զքեզ պահէ:

Բարունեք կարդան,
Խունկ ստաշխ քաղբան
Եղունք կնդրուկ հառմ հայկան
Յառաջևդ ծխէ.
Աստուած զքեզ պահէ:

Է՛, լալ եաղութ ակ
Սուտակ դահանակ
Շիմշիը, զիւմբիւթ, կարկեհան թագ
Գլխոյդ վայել է.
Աստուած զքեզ պահէ:

Յանկեալ բուրաստան,
Հոտ միւշկ ամպէբխան,
Նարդոս քրքում եաղ պալատան
Երեսդ սրբէ,
Աստուած զքեզ պահէ:

Առիւծն ուժով
Վաշանն մորթով
Կամար ունէր սամրն մաղով,
Քիւրք զումաշ կարէ.
Աստուած զքեզ պահէ:

Սիւմպիւլ մանուշակ
Դու գումէշ հայակ,
Տեսդ այծեման սուր լուս խայտակ,
Առ ես գու նայէ.
Աստուած զքեզ պահէ:

Աստղ առաւօտեան,
Դարպաս վեղսակրեան,

Քո ուխտաւորքն են քեզ զուրպան,
Ձեռօքդ մորթէ.
Աստուած զքեզ պահէ:

Յաւերս է Սրսցին
Ձեռ շինէ թուին
Դու աշակերտ էգլաթօնին,
Դու զնա ըժշկէ.
Աստուած զքեզ պահէ:

Ձեռ. տաղարան 1695 թ.

Տե՛ս ծանօթ. 2.

3.

«Տաղ Երզնկացի Յովանիսէ ասացեալ».

Այս ինչ կրակ էր այրեց,
Կամ ինչ խաւարս, որ զկս պատեց.
Ես վէմ անխաղտ էի, խաղտեց.
Պօղպատ ամուրս, զէտ ջուր հալեց:

Եկաւ անցաւ ու ճոխք քայլեց.
Ճոճաց ու զմէջքն կոտորեց.
Դարձաւ ի յետ, խոլորս նայեց,
Զանձս տեսաւ ու զահընդեց:

Օրն շաբաթ լոյս կիրակի
Վերի վանացն ի վայր կուգի.
Բուրվառ ի ձեռս ու խունկն ի լի,
Սաղմոսարանս անդր ունէի:

Հետ կուգայն, հետ կաբդայն,
Երթամ հասնիմ ճաշու ժամի.
Եկն առն հանց կրակն,
Ոչ գրէի, ոչ կարդայն։

Մէկմ՝ է հեծեր պօղ պէտաւի.
Եկաւ անցաւ քաջ մուղալի.
Աչեր ունէր թաւրէղ տալի,
Ընքվին զվեզքս կուտանի։

Խնծոր ձգեց մոկի չարի.
Մէկ մ՝այլ ձգեց, ցածցայ ու առի.

Սէն մուսուրման մօլլայ ղրղի,
Պէն Յովանէս քէշիշ օղլի,
Խնծորդ ի յեսս ի՞նչ բան ունի։

Եօրու եօրու կեաւուր օղլու.
Կեօթուր պիզտէն մուհալ սօղու.
Սէն Յովաննէս քէշիշ օղլու,
Պէն մուսիւրման մօլլայ ղրղի,
Չիրաբ սիրենք, խօշ կուլինի։

Յովաննէսին մայրն է, տղայ.
Հագեր վալա վրան ճուպայ,
Վերի վաներացն ի շուրջ կուգայ
Ու խունկ ու մոմ կուխոստանայ։

Հարեղանե՛ր, ասէք Մեղրայ,
Սարկաւագնե՛ր, Տէր ողորմեա.
Մի՛թէ լուր խելքն ի վերան գայ,
Թ՝ի՛մ Յովանէսն ի տուն դառնայ։

Մէկ մի չասաց թէ Տէր Մեղրայ,
Ամէնն Աղլահ ու շէյտուլայ.
Յետոյ դայս ճուղապն ասացին.
Այլ Յովաննէսին ճար չկայ։

Ծո՛յ Յովաննէս, ծո՛յ իմ տղա՛յ.
Դարձի՛ր ի տունն, ասա՛ Մեղրա՛յ.
Հոնկայ տէրտէրդ կուճորայ,
Թէ Աշան ընկեր է ի հետ նորա։

Հա՛յ իմ մարի՛կ, ես քեզ ծառայ.
Թէ իմ տէրտէրն զիս ճորայ,
Նա ես զԱշան ցցնեմ նորա,
Քան զիս ու այլ խեւ կուլինայ։

Ծո՛յ Յովաննէս, ծո՛յ իմ տղա՛յ.
Դարձի՛ր ի տունն, ասա՛ Մեղրա՛յ.
Դու մէկիկ ես, այլ ճար չկայ,
Այլ լինալու ճարակ չկայ։

Հա՛յ իմ մարի՛կ, ես քե ծառայ.
Զկաթդ, որ կերայ, հալալ արա՛.
Զխելքս առին ու խեվ եղայ,
Ցիսնէ ի քեզ այլ ճար չկայ։

Ծո՛յ Յովաննէ՛ս, ծո՛յ իմ տղա՛յ,
Դարձի՛ր ի տունն, ասա՛ Մեղրա՛յ.
Քեզի ըերեմ Հայու զրս(ա)րիկ,
Զքեզ աւրհնել տամ քահանայ։

Հա՛յ իմ մարի՛կ, մի՛ տխմարնար.
Զկայ նման գէ՛մ Աշային.

Լեզուն պլուպլուլ՝ ձայնն զումբի,
Մէջքն բարակ զէտ ֆռանկի։

Աշան նստեր էր փէնճէրէն.
Ալին երեսին էր, խիստ կուլար.
Թ՝այսօր ծեծեց իմ հայր Ղատին,
Թ՝էր կուսիրես Հայուն որդին.
Տե՛ս թէ կ՝ելնէ, մէկ մի կուգայ,
Ականջն խո՛ւլ Յովաննէսին։

Խեւ Յովաննէսն, երբ զայն լսեց,
Բռնեց զճամբան ի Եղբնկին,
Գլխիբաց դատկն ափին,
Գնաց կանգնեցաւ յառջև խանին։

Բարև երեսա թագաւորին.
Նոքա շուտով զբարևն առին.
Բռնեց զպօղ ձիուն ագին,
Կաֆայ ասաց ամէն ձարին։

Աշան կանգներ ի վերայ բերդին.
Մտիկ կ՝անէր Յովաննէսին,
Քովն է կանգներ դեղին հագնողն,
Ինքն զկանանչն ու զծիրանին։

Ծո՛յ Յովաննէս մտիկ արա՛,
Թ՝ ի վերայ բերդին Թ՝ինչ կուխաղայ.
Դեղինվորին ես եմ ծառայ,
Կանանչվորին զանունն ասա՛.
Թէ չէ լինիմ շահին բաղայ,
Թռնիմ նստիմ Թևիք վերայ.
Պապուս անունն ասեմ մօլլայ,

Աղբօրս ասեն քաղքի շահնայ,
Եւ զիմ անունն ասեն Աշայ,
Մէկալ քրոջս Ղուղութայ,
Իմ մօրս անունն ասեն ֆաթմայ,
Ու հօրս ասեն Ղատի մօլլայ։

Խև Յովաննէսն է քո ծառայ,
Շուտով տէրտես տէրման արա՛,
Թէ չէ խևցայ լեռներն ընկայ,
Չէտ մոմ ի տեղս հալեցայ։

Ծո՛յ Յովաննէ՛ս, մզկիթ մտնուլ պիտիս,
Մատնիկդ ի վեր կալնուլ պիտիս.
Հետ մօլլանուն շուրջ գալ պիտիս,
Ապա ծոցուս տէր կուլինիս։

Աշա՛, սէրտ լինձ հարամ լինա՛յ.
Թէ այդ բաներդ հանց կուլենայ.
Աշա՛, գանուս յօրդ ի մահուն,
Զինչ ջանացիր հետ իմ հաւատուն։

Ութբ կանոն սաղմոս ուսայ,
Զան ալ ի քո սիրուս մոռցայ.
Օր մի չասի թէ Տէր մեղա՛յ,
Ամէնն Ալլահ ու շէյտուլահ։

Ծո՛յ Յովաննէս վրբրի օրա՛ծ
Փոք . . . (Թերի)

Ձեռ. տաղարան 1695 թ.

4.

Տաղ վասն սիրելութեան (երկու լեզուով).

(Յ)այսօր էլ խնամ արտում,
Ենկելէնտի էսկի տէրտում.
Կատարեցաւ ինձ խնդում,
Քի եարըմ սէյրանտա կեօրտիւմ:

Ունեը ունէը ինքն կամաը,
Ղարա տըր գեօզլէրի խումաը.
Խեվ եղայ ես նորա համաը,
Իւկի կիւլիստան ու զէմէը:

Վայրի եղնեբուն նման,
Տիւշուրտունէ կեօնկլումէ կումէն,
Ակռատ մարգարիտ շարման,
Սէն էյլէ տէրտիմէ տէրման:

Անչափ սէր տըվիր ինձի,
Ա՜յ զօնձա կիւլլէրին կէնձի,
Այվի հաղեր ես նարինձի,
Էյլէտին պէնի զարինձի:

Նռան հատին ես նման,
Ղարէնֆիլ էյի ըռէհան,
Եկո՛ր մանունը ի պաղճան,
Կիւլիստան ու սէյվի ըէվան:

Նման է ծոցդ դրախտի,
Կէլ ելմայ կեօնկլումին թախտի,

Մանունը, լուք անենք սէյրան,
Սիւրէյիմ օմրու ու վախտի:

Երբ կու տեսնում զինքն կանգման,
Հէչ զալմազ ճանըմտա ֆէրման,
Եկո՛ր լինիմք ի հէյրան,
Էթմէ՛ կեօնկլումի փէրիշան:

Սուրաթտ է բոլոր լուսին,
Մօռ մէնէվշէ զօնձա կիւլ սին.
Մօտեցի՛ր քո ծառային,
Հայ զալըմ նազիք ու շիրին:

Ի յայսմ աշխարհիս մինջին
Սէն սին շէհիր Զինումաշին,
Երգողիս Յովանէսին
Ըռահմէթ էյլէ պաշին լէշին:

Զեռ. տաղարան 1695 թ.

Յակոբաջան

5.

«Տաղ հարսանեաց եւ ուրախութեան ընտիր եւ գեղեցիկ».

Աստուած օգնէ թագաւորին,
Բաշխէ բազում կենդանութիւն,
Գիշեր ցորեկ լուր հովանին.
Աստուած օգնէ թագաւորին:

Դա թագաւոր մեզ երկրածին,
Երեսը լոյս է երկնային,
Զարդարեալ է բոլորովին.
Աստուած օգնէ թագաւորին:

Երանեցաք իւր վաճառին
Ընդ ընկերոջն իւր կողակցին
Թագուհին, որ զարդարեցին.
Աստուած օգնէ թագաւորին:

Ժողովեցան ազգ և ազին
Ի տեսանել նոր փեսային,
Լուսոյ պսակն ի գլուխ եդին.
Աստուած օգնէ թագաւորին:

Խնդան ամէն իւր սիրելին,
Ծերք և մանկունք իւրեան որդին,
Կուսանք աղջկունքն բոլոր հարսին.
Աստուած օգնէ նոր փեսային:

Հայրն և մայր, եղբարք նորին
Զհանան, յոյժ փառաւորին,
Ղամպար մոմեր փեսին վառին.
Աստուած օգնէ նոր փեսային:

Ճշմարտապէս նման նմին
Մեծն Աբրահամ է Սառային
Յակոբայ մեծ և Հռաքելին.
Աստուած օգնէ թագաւորին:

Նոր ժամանեալ Յիսուս Քրիստին
Շուրջ Գալիլեայ հարսանիքին

Որպէս փոխեաց դջուրն գինի.
Աստուած օգնէ թագաւորին:

Զար թշնամիք քո հալածին,
Պատիւ ասա՛ հարսնարանին,
Ջուր ու գինի տո՛ւր ամենին.
Աստուած օգնէ թագաւորին:

Ռահան, Նոճի և մրտենին
Սուսամբ, Նարկիզ և Նռնենին
Վարդն և զանոնք ընծայ բերին.
Աստուած օգնէ թագաւորին:

Տաճար մտին ընդ քահանին,
Բամեալ բազում ազգ միասին,
Ցնծութեամբ գքեզ պսակեցին.
Աստուած օգնէ թագաւորին:

Ուրուին պսակ պատրաստեցին,
Փառօք վայլէ յեկեղեցին.
Քեզ Մարտիրոսն ասաց յեսին.
Աստուած օգնէ թագաւորին:

Ձեռ. տպ. 1617 թ.

Մարտիրոս քահանայ

6.

Տաղ եւ օրհնութիւն ուրախութեան

Աստուած զայս տունս շէն պահէ,
Բազում բարեօք զինք զարդարէ,

Գեղեցկաշէն չորս անկիւն է.
Աստուած զայս տունս շէն պահէ։

Դռներն ամէն քառակուս է,
Եւ լուր տախտակն անվոյտ վայտ է,
Զամէն մարդոյ և բաց այնէ.
Աստուած զայս տունս շէն պահէ։

Երեսն սև, ո՛վ վատ ասէ,
Ընդ տանս այսմիկ որ շինեալ է.
Թէ չես օտար, նա դու նայէ.
Աստուած զայս տունս շէն պահէ։

Ժողովս ամէն որ կոչած է,
Իմ քահանայքս, որ բազմած է,
Լի՛ց զդաւաթն, որ խաչ հանէ.
Աստուած զայս տունս շէն պահէ։

Խաթուն կանայքն, որ նստած է,
Ծառայք բազումք ձեռք խաչկապ է,
Կերակուր շա՜տ, լուր ճաշակէ.
Աստուած զայս տունս շէն պահէ։

Հայր Աբրահամու նման է,
Զայն և յերկնից Աստուած օրհնէ,
Ղեբէոսն ժողովուրդն է.
Աստուած զայս տունս շէն պահէ։

Ճերմակ կարմիր գինի շատ է,
Մարուպ գուսան յորդոր կ՚ասէ.
Ցայնժամ ամէն հաղթապետ է.
Աստուած զայս տունս շէն պահէ։

Նա տանուտէրն և վեր ելնէ,
Նիշան և ձեռն և կուկանգնէ,
Ով կուսիրէ, և նա խմէ.
Աստուած զայս տունս շէն պահէ։

Զարն ու բարին զամէն քննէ.
Պա՞տ է խմել, եղբարք, թէ չէ.
Զուր թէ խառնէ, նա ինք գիտէ.
Աստուած զայս տունս շէն պահէ։

Ռատով խմել կու վայելէ.
Սիրով խմելն, եղբա՛ր, լաւ է.
Վաղն սիրով կուհարցանէ.
Աստուած զայս տունս շէն պահէ։

Տաճարն ամէն սրբաբար է,
Բամեալքս ամէն պատուական է,
Ցնծան նոքա բոլոր սրտէ.
Աստուած զայս տունս շէն պահէ։

Խլուրերս ամէն մեծարած է,
Փոքր և մեծեր ամէն ծանր է.
Քեզ Մարտիրոսն յետին կ՚ասէ.
Աստուած զայս տունս շէն պահէ։

Ձեռ. տաղարան 1617 թ.

7.

Աստուած օգնէ մեր կնքահօրն

(Սկիզբն բերի)

. . . . . ցանս քոյին.
Թողու զանցանս քահանայն և Տէր վերին.
Աստուած օգնէ մեր կնքահօրն:

Ժողովեցան բազում ժողովք և մնասին,
Իւր գայեկովն կոչէ զմանուկն և յատենին.
Լուր գայ, բերէ զմանուկն յառաջմէ ժողովին.
Աստուած օգնէ մեր կնքահօրն:

Խոնարհեալ տես կնքահայրն իւրոյ սանին,
Ծունր կրկնէ երեք անգամ յեկեղեցին,
Կամաւ բառնայ վասն Աստուծոյ զնա իւր բազկին.
Աստուած օգնէ մեր կնքահօրն:

Հրաժարեա ասէ երէցն իւր վկային.
Զայնէ ւ ասէ. Դարձիր և լոյս աստուածային.
Ղամբար վայրէ և հաւատոյ երրորդութեան.
Աստուած օգնէ մեր կնքահօրն:

Ճարտար մտնու յեկեղեցին ընդ քահանին,
Մերձ և խորանն կանգնելով պատարագին.
Յայնժամ ասէ. Մերկացուցէք զհանդերձն հին:
Աստուած օգնէ մեր կնքահօրն:

Նա քահանայն զջուրն արկանէ աւազանին,
Նիշ եւղ օծման, պայծառ սուրբ խաչն յաջոյ ձեռին,
Որ արկանէ զմեռանն և ջուրն ըստ օրինին,
Աստուած օգնէ մեր կնքահօրն:

Զկնք խաչը, ասէ, Պօղոս մեծն առաջին,
Պատուէր առնէ աւետարանն մեր Փրկչին.
Ջուր արկանէ երրորդ վերայ նորընծային,
Աստուած օգնէ մեր կնքահօրն:

Ուստ բաշխէ, զինչ Յովհաննէս, էջ սուրբ Հոգին,
Սուրբ մեռոնաւն օծանէ զտիպ պատկերին,
Վերաբերեալ երկրպագէ սուրբ սեղանին,
Աստուած օգնէ մեր կնքահօրն:

Տանին և տուն զինք, պաշտելով ճանապարհին,
Բամեալ մարդիկ բազում երթան առ նա բազմին.
Ցնծութեամբ տօնախմբեն շատ այր և կին.
Աստուած օգնէ մեր կնքահօրն:

Ի հօրով մօրով անանկ, ասեն ւ ըմպեն զգինին,
Փառաց և փառս բարձրանան և յորդորին,
Քեզ Մարտիրոսն ասաց զայս բանս Ղարաճասրին.
Աստուած օգնէ մեր կնքահօրն:

Ձեռ. Տաղարան 1617 թ.

8.

Տաղ ի տես սիրելեաց եւ հեռաւորաց [1]

Ա.յսօր զքեզ տեսայ և ուրախացայ,
Բարւով զարդարեցեալ, զՏեառնէ [2] դոհացայ,
Գարնան ծաղկի [3] նման, որ երևի [4] նա,
Ա.յսօր զքեզ տեսայ և ուրախացայ:

Դրախտէն աւետաւոր ես՝ հանց լմացայ,
Երեսդ ի վեր նայել սիրով կամեցայ,
Զարդարեցեալ դաշխարհս ամէն զինչ [5] որ կայ.
Ա.յսօր զքեզ տեսայ և ուրախացայ:

Էկիր հաղար բարւով, աչօք իմ տեսայ,
Ընդ այդ քո գալստեանդ յոյժ ուրախացայ,
Թող դու բաղում ապրիս աշխարհիս [6] վերայ.
Ա.յսօր զքեզ տեսայ և ուրախացայ:

Ժամանակաց պարծանք եղեր դու [7],
Ի տեսանել զերեսդ ամէն կու ցանկայ.
Լուսին ես դու բոլոր [8] զմեզ լուսաւորեա՛.
Ա.յսօր զքեզ տեսայ և ուրախացայ:

Խնդամք [9] ամենեքեան զինչ մանուկ ազայ,
Ծերունք [10] շատ պատուական, ընտրեալ քա-
հանայ,
Կանայք պարկեշտաւորք, կուսանք նորընծայ,
Ա.յսօր զքեզ տեսայ և ուրախացայ:

Հային ազգս երեսդ ամէն ամիրայ,
Զայնիւ քեզ երանեն հազար ալաֆայ [11],
Ղամբար ես լուսաւոր, առ մեզ լոյս ծագեա՛.
Ա.յսօր զքեզ տեսայ և ուրախացայ:

Ճարտար ես բանաւոր, հոգւոր և արքայ,
Մարմնով դու անմարմին, հրեշտակքեզ ցանկայ,
Ցամէն երկիր բոլոր քո ձայնդ կուգայ [12].
Ա.յսօր զքեզ տեսայ և ուրախացայ:

Նայեա՛ առ մեզ սիրով և զմեզ զարդարեա՛,
Շրթամբք քո անուշիւք դու առ մեզ խօսեա՛ [13],
Որ քո տիպ պատկերդ է զինչ լուսինկայ [14].
Ա.յսօր զքեզ տեսայ և ուրախացայ:

Զար թշնամին ամէն ի քէն հեռանայ [15],
Պատիւ քո մեծութեան այլ խիստ լինենայ [16].
Զահիւ լուսաւորես [17] զամէն մերձակայ.
Ա.յսօր զքեզ տեսայ և ուրախացայ:

Դաբրի ես բանաւոր և մեզ հայր արքայ,
Սաղմոսիւք, օրհնութեամբ առ մեզ բարբառեա՛,
Վասն մեզաւորիս, որ առ քեզ եկայ [18],
Ա.յսօր զքեզ տեսայ և ուրախացայ:

Տեղեան պատկերիդ [19], որ արժանացայ,
Բամեալ ես մեզաւոր [20], որ հետևեցայ,
Ցնծայ հոգիս մարմնով և ուրախանայ.
Ա.յսօր զքեզ տեսայ և ուրախացայ:

Ուանդ հոգւով կացի, նայ առողջանայ [21].
Փառաւք տեսայ զերեսդ, մեղաւք [22] մաքրեցայ,

Քեզ Մարտիրոսն եղև 23 յեռելն նոր ծառայ 24.
Այսօր զքեզ տեսայ և ուրախացայ:

Տե՛ս ծանօթ. 8:

9.

Գովեաս սուրբ Աստուածածնայ վանացն Ցանկուրիոյ, ոգեալ ի Մարտիրոս վարդապետէ Ղրիմեցւոյ

Մտի ընդ յարկաւ տեղւոյդ սրբութեան
Ցերկրպագութիւն աւրհնեալ քո սեմայն,
Եղէ արժանի քոյին տեսութեան,
Սուրբ Աստուածածի՛ն տենչալի խորան:

Աղերս գովեստն չունիմ քեզ արժան,
Զխունկ զայս նուէր ընկալցիս սակայն
Ի յաղքատ մտաց իբր այրւոյն լումայն,
Սուրբ Աստուածածի՛ն տաճար հրաշազան:

Բարունաց բանին անօթն ընտրութեան
Այն, որ յանճառելոյն եհաս տեսութեան,
Նա վառեալ ի սէր քոյին յօրինման,
Սուրբ Աստուածածի՛ն ցանկալի խորան:

Տաճար զքեզ կանգնեաց վիառազարդական,
Ի ձև խորանին Բէսէլիէլեայն,
Գաղատացիանի երկրիս պահապան,
Սուրբ Աստուածածի՛ն տաճար տիրական:

Ի հարաւակոյս կայ քեզ յանդիման
Քաղաքն Անկուրի եռեակ պարոպեան.
Մինչոցն դուր դաշտ ընդարձակ և լայն,
Դու բազմեալ ի գահ թագաւորական:

Բամբ քահանայից մանկամբք դպրական
Դիմեալ երամով յար ի քեզ յուխտ գան,
Քաղցր եղանակեն զտաղ և շարական
Միածնի Որդւոյդ յաւէտ վառս տան:

Ունիս բոլորակ ձև խորհրդական,
Կամարին երկնից յարմար և նման,
Լուսածագ շմաթք բուն երկոտասան,
Սուրբ Աստուածածի՛ն գեղազարդ խորան:

Սրբութիւն սրբոց սոսկալին սեղան,
Ուր պատարագի դառն անպարտական,
Հայն յերկնից ելեալ կայ անապական
Ի սուրբ սափորումդ աւրհնեալ մանանայն:

Վերնայարկ սրահք զքեզ պարառական
Ուր ժամահարից հնչի անոյշ ձայն
Փայտ ընդ պղնձի յոյժ յարմարական
Սուրբ Աստուածածի՛ն տաճար քաղցրաձայն:

Ակամբք զարդարեալ խաչ և փաւաղան
Զուտ յոսկւոյ սրբոյ ունիս կենդանեան
Բուրվառք արծաթիք յաջմէ և ահեկեան
Սուրբ Աստուածածի՛ն սոսկալի խորան:

Բամ ծագ արքայն յարմար և պատկան
Ունիս մշտավառ կանթեղք հրճուական

Գեղգեղափայլակ առտեղաց նման
Ի փառս և ի գարդ քոյին սրբութեան:

Գեղին ։ ըսպիտակ շամայքն ի շաբ կան,
Եղեալ յաշտանակ եօթնաջահական
Ըստ Զաքարիային յահարկու տեսլեան,
Սուրբ Աստուածածնի՛ն յարկ հիացական:

Այլ ևս զարդուք լի ես և փարթամ,
Շատ ունիս ընկիսք յոսկւոյ պատուական
Մետաքսեայ ծածկոցք շաբ մարգարտական
Սուրբ Աստուածածնի՛ն լուսազարդ խորան:

Պայծառազգեստիւք պճնեալ քահանայն
Յորժամ մերձ լինի յահեղ սրբութեան,
Յաջմէ ։ ահեկէ սրովբէանման
Նուագին հնչմունս երաժշտական:

Եղէք կենաման խունկ սաբայական
Հոտ անուշ հալուէք քեզ պիտոյանան,
Պարգևօք պատուիս յերկրէ հեռատան,
Սուրբ Աստուածածնի՛ն գահ արքայական:

Ցաճար տիրաշէն դու հիացական
Տըւար մեզ Հայոցս պարգև սեփական.
Կացցես հաստատուն այժմ և յաւիտեան
Մինչ աւրհնեալ գալուստ Փրկչին միւս անգամ:

Ի քէն աղերսիւ հայցեմք լալական
Մայր Տեառն Յիսուսի ծննդեամբ կուսական
Վասն մեր մաղթեա առ ծնեալդ Բան
Ողորմիլ դթով յաղդս հայկազեան:

Ի հաղար հարիւր մերս թուականն
Այլև տասն և ութ յարաբարդական,
Յոր եղէ օրհնեալ տեսոյդ քո արժան
Մարտիրոս պիտակ պետս Սաղիմայն:

Տե՛ս ծանօթ. 9: Ձեռ. տպարան 1695 թ.

10.

Տաղ վասն գինւոյ յԱզարիայէ ասացեալ [1]

Աբարիչ Տէր քաղցրացաւ ի յԱդամայ,
Եւ ծնաւ ի սուրբ կուսէն Մարիամայ.
Յայտնեաց զփառս իւր աշխարհի երեսնամեայ
Նախ զաքանչելիսն ի Գալիլեայ [2]:

Զվարդապետն մեծարեցին ի հարսանիս,
Եւ հատաւ փութով գինին ի սեղանիս,
Աւրհնեաց զջուրն և փոխարկեաց զանուշ գինիս
Աւրհնութի՛ւն Փրկչին տանս և սեղանիս:

Աւրհնեաց Տէր զհինգ նկանակն հինգ հաղարին [3],
Որք կերան և յաւելան տասն սակառ լի [4].
Աւրհնութիւն աստուածային ի՛ջոյ՛ ի տունս,
Աւրհնէ՛ զսեղանս, անո՛ւշ և ըմպելիս [5]:

Քաղաքնիք և հայրապետքն ի՛ջնուն սեղան,
Եւ առնեն կրթիսայ ի ձեռն [6] անուշահամ,
Քաղցր երգեն տաղ մեղեդիկ [7] և շարական,
Անուշահամ է, քաղցրաճաշակ է:

Իշխանք և թագաւորք 8 ելջնուն սօհպաթ 9,
Սուրահի 10 ոսկի լնուն մըղուր 11 արծաթ,
Մանուշակ վիթեալ կազմի 12 ըռեհան և վարդ,
Անուշահամ է, և 13 քաղցրաճաշակ է:

Աշխարհիս սէրն ու պատիւ Տէրն ետ գինի 14.
Եւ մարդոյ եաշմն ու ուռաքն 15 այլվի գինի 16.
Փրկութիւն մեղաւորաց այլվի գինի 17
Անուշահամ է, քաղցրաճաշակ է:

Ցորժամ որ դու գինի նոտիս 18, շատ մի՛ խօսել 19.
Քո ընկերին զաղէկն 20 ասա՛, վատ մի՛ ասել 21,
Այլոց գործ ի հրապարակ 22 մի՛ բամբասեր,
Քրիստոս զքեզ աւրհնէ՛ հոգւով և մարմնով:

Եթէ ըստակ տաս ի գինին և արբենաս 23,
Վէճ ու կռիւ 24 դու բորբոքես և մարդու տաս,
Վաղը ընէն 25 գընտան ձգեն 26 շատ տուգանք տաս.
Քաղցրիկ խմեցէ՛ք և ուրախ կացէ՛ք:

Բարերար Փրկիչն Յիսուս զայն երանէ 27,
Չխազաղաբարն և զհամբերողն որդի կոչէ,
Խոնարհամիտն և հնազանդն ընակէ.
Հնազանդ ուրբ կացէ՛ք և չար մի՛ առնէք:

Սատ թէ 28 գինի նստիս միշտ հանապազ,
Պարարեալ գանձդ 29 բռես 30 և գիրանաս,
Աղօթից, ժամատեղացն ծուլանաս 31,
Վերջքն է դիժաը, վերջքն ահեղ ատենին 32:

Նմա տացուք միշտ գոհութիւն, յամենայն ժամ
Պատրաստեաց 33 մեզ կերակուր անուշահամ,

Պարգևեաց և մեզ բաժակ անապական 34,
Նմա աւրհնութիւն այժմ և յաւիտեան:

Քանքարոյ բիւր պարտական Աղարիայ 35
Սակաւիկ բանս ասացի գինուն վերայ,
Դուք ասացէք մէկ Ողորմի և Հայր մեղայ.
Քաղցրասցի ձեզ Տէր, քաղցրասցի մեզ Տէր:

Տե՛ս ծանօթ. 10:

11.

Արարիչ Հայր երկնային
Շարժեաց գութն աստուածային
Առաքեաց զՄիածին
Փրկութեանս ադամային:

Զի ծնաւ թագաւորն անճառ
Յերուսաղէմ քաղաքին.
Թիւ երեսնամեայ լցեալ
Յայտնեաց զփառս աստուածային:

Առաքեալս երկոտասան
Վիճակեաց քառաց կողմի.
Թադէոս Հայս առաքեաց
Լի շնորհօք աքանչելի:

Բենակ լուսափայլ բանի
Քարոզ սուրբ Թադէոսին
Յորդէգրութիւն հրաւիրեաց,
Մինչ յԱրտաշատ քարոզին:

Իսկ չար թագաւորն պիղծ,
Սանսարուկ անուն նորին,

Նահատակեաց զառաքեալն
Որ այժմ մահու կոչի:

Անցաւ ժամանակ յոլով
Երկհարիւր վացուն ամի
Տէր ետ սուրբ Գրիգոր Պարթև
Թադէոսի վիճակին:

Յոյժ ահեղագոչ թնդմամբ
Ետես զիջումն Միածնին.
Շինեաց աթոռ հրաշալի
Վաղարշապատ քաղաքին: (Թերի)

s. Զեռագիր 1647 թ.

12.

Տաղ Ադամայ մերկանալ

Ադամ նստել դուռն դրախտին,
Լայր և ձայնէր ողորմագին.
Ա՜յ սերովբէք, ա՜յ քերովբէք,
Որ ի դրախտդ մտանէք:

Զաստուածութիւն ազաչեցէ՛ք,
Զայս մեղաւորս հաշտեցուցէ՛ք.
Երէկ էի մէջն ի դրախտին
Լուսով ծածկեալ աստուածային:

Այն թագաւորն էի դրախտին
Նման հպօր պատուիրանին.

Վասն Եւայի իմ կողակցին,
Որ խալտեցաւ խաբմամբ օձին,
Զիմ գեղեցիկ զարդերքս առին,
Զիս անողորմ մերկացուցին:

Բուսկայ ու մերկ եմ ես հիմայ,
Եւայ նոտել ու խիստ կուլայ.
Յէրը չի ընկնիլ ոտքն նորա,
Լալով ասել թէ Տէր մեղայ:

Ի յայս մէկ տարպաս ես խալտեցայ,
Բանիւ կնոջն խաբեցայ,
Ի կողէս կին ստեղծեր զնա.
Պտղոյն երես և լնձ, կերայ:

Տէր անիծեաց զօձն և զԵւայ,
Ես այլ ի մէջն դրեցայ.
Երբ զոտնաձայնն Տեառն լուայ
Գալոյ ի դրախտն, ես ափշեցայ:

Տերև թզենւոյ առեալ սփածայ,
Ի մէջ ծառոցն անկեալ թագեայ.
Եկն և ձայնէր. Ադա՛մ, ո՞ւր ես.
Ես ձայն տուի, թէ մերկ եմ ես:

Ա՜մ ո՞վ ասաց թէ մերկ էք.
Կամ ո՞վ խաբեց, լնձ պատմեցէ՛ք.
Յուսալի՞ պատուէր տուի մի՛ ուտէք:

Է՞ր չի ասել թէ Տէր մեղայ,
Դու ես Աստուած, լնձ ողորմեա՛.
Քանց թէ պատճառ դրի զԵւայ,
Անանց բարեայն թափեցայ:

Ա՜յ սերովբէք, ա՜յ քերովբէ՛ք
Այդ որ ի դրախտդ մտանէք,
Երբ որ ի դրախտդ մտանէք,
Դրախտին դուռն մի՛ փակէք.
Զիս ևս դիմաց կանգնեցուցէ՛ք,
Պահ մի հայե՛մ լոկ, դարձուցէ՛ք:
Օ՜ խուչիշեմ զձեզ, ծաղկո՛ւնք,
Բաղցրաբարբառ, անմահ զուարթո՛ւնք,
Օ՜խ խուչիշեմ զձեզ թռչո՛ւնք.
Անուշահամ աղբերակո՛ւնք.
Օ՜խ խուչիշեմ զձեզ ձկո՛ւնք,
Եզի՛նք, դառո՛ւնք և անասո՛ւնք,
Որ կայք ի դրախտդ աստուածատուն
Յերկրի ընտրեալ աղգի ակունք,
Որ դրախտդ վայելէք,
Զեր թագաւորն եկէ՛ք, լացէ՛ք:

Տե՛ս ծանօթ. 12.

13.

ՔԷԷՆ ՄԻՆՉԵՒ Ի ՅԱՅՐՆ

Քէէն մինչև ի յայրն օրհնաբանութիւն,
Փառք և պատիւ յաւէտ երկրպագութիւն
Իւսեալ սուրբ հրաշալի Զուղայոյ վանից
Ցանկալի հրեշտակաց և սերովբէից:
Բենակ պճնեալ զարդիւք զարդարեալ վիմի
Տուն և տաճար շինեալ անմահ արքային,
Վանք է հռչակաւոր բարձրաւանդակի

Սոսկալի տեսողացն և հիանալի.
Դահ երկար գնացեալ զատեալ ի դեղջէն,
Զահ ակն է լուսավայլ անշեջանելի,
Պատուելի հրեղինաց և հողեղինի
Զորեքկողմ յաշխարհիս պարծանք համայնի.
Ով ամենօրհնեալ սուրբ Աստուածածնի
Շառաւիղ լուսազարդ Ամենափրկչին.
Նոր դրախտ եդեմական տնկեալ ի յերկրի
Յորդառատ աղբիւր անհատանելի.
Մանկունք նոր Սիոնի նման հրեշտակի
Ճրագունք միշտ պատրաստ, մշակ պանծալի
Ղօղեալք ի դժոխոց զատեալք ի յերկրէ
Զայնիւ օրհնաբանողք միշտ երգ սաղմոսի,
Հովուապետին մեծի լուարուք բանին,
Կատարողք հրամանաց անմահ փեսային.
Ծառայել հրամայեաց Տէրն ամենայնի,
Խաղաղ թո՛ղ կին, զորդի և զսէր աշխարհի.
Լո՛ւր ասէ (՞) զխաչն և ե՛կ զկնի
Ի զատանալ չարեաց, կալ անապատի.
Ժամ և պատարագ սուրբ մատուցանէաք (՞)
Թողութիւն հայցեցէ՛ք մեզ մեղաւորի.
Ընկալցէ զաղաչանս մեր անարժանից,
Երանելի խոստմանց առնէ արժանի,
Զարքայութիւն շնորհեա՛ մեր ննջեցելոց
Եւ տո՛ւր լսել բարբառ քաղցր և հեշտալի.
Դառն դժոխոց պատեա՛ Փրկիչ (՞)
Գաբրիէլեան արա՛ արժանի (՞)
Բարեխօսեա՛ առ Տէր սուրբ Աստուածածնի,
Արժան առնել զմեզ տեսութեան դրախտին:

Աղաբիա եղեւկ ընակեալ ի գեղջի,
Աղաեղացեալ մեղօք լցեալ յաշխարհի
Յերես անկեալ գետին սուրբ Աստուածածնի
Եւ սուրբ կրօնաւորաց դուռն սուրբ ուխտին:

Ձեռ. տաղարան 1647 թ.

14.

Առեղծուած

Ա.

Եղբայր ինձ միտ գիր դու հոգւով.
Տեսի տաճար մի լի լուսով
Շինած, կազմած ութ անկիւնով
Եւ աստիճանքն իւր համարով,
Վաթսուն ու չորս ոսկի դռնով,
Հարիւր յիսուն պատուհաններով,
Ի նմա կուսանք կուգան լալով,
Բոզք և պոռնիկք պարեն հոգւով.
Այլ որ կամին յաւժար սրտով,
Զնա ըմպէ ոսկի թասով:

Ութ մաղախ ես ունէի,
Ամէն մաղախ ի ութ քսակի,
Զորն որ պիտէր զայն բանայի,
Նա ինձ բուրէր հոտ կնդրկի:

Ութ վարչ տեսի կաթամբ լցած,
Գունով է ինք 2 քան զհուր վառած.
Յորոց արբի ես անքաւած 5,
Ի ոչ լիացայ զերդ ծարաւած:

Բ.

Շնորհալից մին ազիւսակ
Ունի հաղար լեառն սպիտակ,
Նոցա մաքինքն են սեւորակ
Ի լիբեանց հովիւքն որպէս հրեշտակ:

Մաւր արդանդն էր սեայլին,
Հաւրն բարակ ամենեւին.
Որդիքն սեաւ ծնանէին,
Դաշտ խոպիտակ բնակէին:

Դաշտ մի սպիտակ և պատուական
Լցեալ ծաղկաւք յոյժ զանազան
Ոչ յեղանակս միայն գառնան,
Այլ անթառամ ժամս ամենայն:

Գ.

Ձեռք Ամենակալին ստեղծ զիս.
Եւ բարձրացեալն ի բարձունս ընծայեաց զիս.
Յորժամ ծնայ ես յորովայնէ մաւր իմոյ,
Ես խմաստնացուցի զնա.
Կամ յարևելս, և խաւսիմ յարևմուտս.

Ի մեռելոց խաւսիմ և յանշնչոց ձայնս արկեմ.
Ծնունդ իմ է ջրոյ և մահ իմ է նմանէ.
Ի հրոյ զարհուրիմ և է ջրոյ սասանիմ.
Բայց նստելով է վէմս, արհամարհեմ զնոսա:

Անուն իմ բաղկանայ երեք տառիւք,
Առաջին է միակէն,
Երկրորդն է տասնեկէն,
Երրորդն է հազարէն:

Դ.

Ի չորս տատ·էն չորս էառ,
Զայլն երեր, կացոյց յերևան.
Ամէն է ԺՌ., մէկ պակաս և այլն է լման:

Ինն քառակի վակեաց,
Որ ճարտար մարդիկն իմանան.
Զկէտն ԺԸ. առնէ,
Որ տխմար մարդիկն էլ գիտանան:

Տե՛ս ծանօթ. 14. Ձեռ. սաղմոսարան 1623 թ.

15.

«Այլ իմն բան ծածուկ»

Մարդ առանց մեղաց,
Ծով առանց կենդանութեան,
Տիւ առանց արեգական,

Դիշեր առանց լուսին,
Եւ հուր առանց բոցոյ,
Տարածեալ կան առ մեզ:

Հայր իմ ծնաւ զիս ի մօրէ իմմէ.
Եւ ես ծնայ զմայր որդւոյ իմոյ.
Եւ որդիքն իմ ծնան զմայր հօր իմոյ:

Մի այս ունի բաղմոտանի,
Եւ գիսաւոր ընթացք ունի.
Ի խորս անճառ զննեալ նստի,
Եւ անջրդիս նա մեռանի:

Ո՞վ է այն, որ դեռ ինքն չէր ծներ.
Ծնաւ զմայրն, և դարձեալ ինքն ծնաւ ի նմանէ.
Դարձեալ կրկին ծնաւ զմայրն և կերակրեաց զնա.
Եւ յետոյ քաղցեաւ, եկեր զմայրն.
Եւ դարձեալ կերակուր եղև, որ մայր զինքն եկեր:

Ելն մի ասէր ցորդի իւր»
Քո հայրն է իմ հայր.
Դու ես իմ եղբայր.

Ես եմ քու մայը,
Դու ես իմ որդի:

Ձեռ. 1757 թ.

16.

Վասն սաղմոսի եւ ժամատեղեաց

Ոմանք ասեն զբան սաղմոսին,
Բայց միտքն չէ ի վերայ բանին.
Երբ ժամ ասելն վճարի,
Բնաւ չգիտեն թէ զինչ ասացին:

Ոմանք զրուց տան ընդ միմեանս.
Զուռնին զահանջն յԱստուծոյ բանս.
Զի չեն եկեալ յուսով ի ժամս,
Այլ կուհաշուին դան և տուգանս:

Ոմանք եկեալ յեկեղեցին,
Ու միտքն ի գրաց կայ ի չարին.
Աչաւք հային ի կուս ւ ի կին,
Զերդ այլազգի կանգնեալ յտին:

Ոմանք ասեն սաղմոս ծայրատ,
Զի ոչ ունին յոյս և հաւատ,
Զանան զրծնուլ, երթալ ի դատ,
Դատարկութեամբ ծաղր և կատակ:

Ոմանք չունին յոյս ի յԱստուած,
Ի ոչ աղաւթեն յուղիղ մտաց.

Այնպէս նեղին ժամատեղաց
Զինչ զընդանած կամ տուգանած:

Ոմն կանչէ ձայնիւ ուժգին,
Զի յաղթեսցէ զձայն ընկերին.
Եւ երբ լինի լնքն առանձին,
ԶԱստուած չիշէ ամենևին:

Ոմանք կանգնին նման վայտի,
Ծունը չածեն յեկեղեցի.
Այլ բեռընդնին գաւազանի,
Զթիկունսն տան ընդդէմ որմի:

Ոմանք ի ժամ գան և նստին.
Կէսքն ննջեն և մրափին,
Եւ շատ քան զչոր վայտ կանգնին,
Ծիծաղելով շաղփաբանին:

Որք յԱստուծոյ շնորհաց զրկին,
Եւ ընակարան դիւաց լինին.
Ի բարեաց գործոցն փախչին,
Եւ յամենայն չար շաղախին:

Որք զմահու աւրն չյիշեն,
Ու զդատաստան ի միտ չածեն,
Զդժոխոց ահն չքննեն,
Նոքա ամէն չարիք գործեն:

Ձեռ. սաղմոսարան 1623 թ.

17.

Ի Յովսէփ վարդապետէ Աղթամարցւոյ ասացեալ

Երկու վնաս կայ ահագին,
Որ խոցէ զաբեղն հոգին.
Մէկն որ վատահ խմէ զգինին,
Զոր չէ պատեհ կրաւնաւորին.
Մէկն որ տիրնա սարդ զաց (sic)
Ի ուսուցանող լինի նոցին.
Խոցէ վիրաւորէ զմարմին,
Եւ զառնութեամբ ընու զհոգին:

Աւրհնեալ է Աստուած:

Ձեռ. սաղմոսարան 1623 թ.

18.

Ոտանաւոր վասն քաջավարժութեան գրոյ նորակիրթ մանկանց

Ա՛ռ քեզ յիմոց Բաղկէ մատանց Գիր դրչութեան.
Դուն և խրատ Եղահոմեալ խուն Զարդութեան.
Է իմ առ այս Ըստ ծերական Թելադրութեան,

Ժամանակաւ Ի յոյս տառից Լեր քերդութեան.
Խոկմամբ վանգից Ծանօթ ու Կիրթ վարդառութեան.
Համայն յաւէտ Զայնաւորաց Ղեկին գրութեան.
Ճարտար դու լի՛ր Մտօք Ցիմաստ գրագրձութեան,
Ներգահ զանձայնս Նարայարեա՛ Ոյց ձայնութեան,
Զէ մարթ Պատուել Զանիւ միայն գծագրութեան,
Ռաբունական Սահման չունել Վկայութեան.
Տրվա՛ զուղիղն ի քեզ Բամել գեղ Ցանկութեան
Իւսել ի Փառս Քրիստոսի այժմ ւ յաւիտեան:

* * *

Ահա՛ Բանամ քեզ Գրչութեան Դուռն խրատու
Ե՛կ դու Զորպէս Էակ Ընկալ յարհեստ գրելոյ.
Թէս ծրութեան Ի քեզ Լծեա՛ ընթեռնլոյ,
Խորհեաց Ծոմով Կրթել յիմաստս Հանճարոյ,
Զէթ Ղապտերն ձրագի Մտացդ միշտ մատո՛.
Ցընթացս Նուրբ Շաւղաց գրոց զոտս Ուղղեցո՛.
Զքնաղ Պտուղ ոգւոյդ Զամբեա՛ Ռեանի գրոյ,
Սովոր Վանգից Տառից Բամից զքեզ կացո՛.
Ցօղով Իւթոյ Փոյթ Քերթութեան զոգիդ արբո՛.
Եւ զուարճասցիս Օր ըստ օրէ յայսմ ցօղոյ:

Ձեռագիր 1696 թ.

19.

Կարապետի եռամեծի վարդապետի ասացեալ խրատս պիտանի մանկանց եկեղեցւոյ ոտանաւոր տաղիւ

Ամենայնի սկիզբն ես եմ.
Դուք լուա՛ղ՝ուք զոր ինչ ասեմ.
Ո՛վ մանկունք իմ, զձեզ խրատեմ.
Եւ զբնութիւնս իմ ձեզ ճառեմ։
Զշնորհս իմասցիք նոցա բաշխեմ,
Իմաստասէր, ուշիմ կազմեմ,
Քանզի առատ եմ, որ շնորհեմ
Միայն զկամքն ի փոյթ խնդրեմ։

Բախեա՛ զդուռն, թէ զայդ ունիս.
Մի՛ երկմտի՛ր, թէ շնորհ չունիս.
Միայն սիրեա՛ զսիրելիս,
Որ շատմարան շնորհաց լինիս,
Չի թէ շնորհաց մանուկ լինիս,
Եւ իմ հնազանդ ոչ գտանիս,
Մի՛ աշխատիր, զի չընդունիս
Դու զիմաստից մաքուր հոգիս։

Գերամաքուրն Յիսուս զեկոյց,
Դպրապետացն այսպէս ուսոյց.
Չի զմարգարիտն ետ ապացոյց,
Եւ զանհնազանդսն խոզացոյց [1]։
Որպէս զմարգարիտն տայ նոցունց,

Ներհակ լինի Տեառն որ ծանոյց.
Չի զմարգարիտն աղտեղացոյց,
Եւ զանհնազանդսն ոչ աւգտեցոյց։

Դուռն իմ նոցա է յոյժ փակած,
Որք շնչախառն ասեն թէ բաց.
Ներքուստ ձայնեմ թէ դուրսդ կաց,
Քանզի չունիս զիմաստից հաց.
Զունիք դուք բարք հնազանդ արանց
Ի ոչ պատմուճան մաքրասիրաց,
Մանկունք, վասն էր ասէք թէ բաց,
Քանզի չունիք զգեստ հարսանեաց։

Երգեմ ձայնիւ ես նուագ [2],
Կոչեմ զձեզ իմ փափագող,
Յառագաստ իմ [3] դուք էք ընակող
Եկայք կերայք զհաց իմ ազդաւոր [4]։
Արուեստ իմ գոնէ [5] բաղդատաւոր,
Սրատեսողացն իմ ես խնդրաւոր,
Վասն այսորիկ եմ արտաքսաւոր
Կուրացն, որ ոչ են իմ տեսաւոր։

Զհանգամանս և զղհանդէս
Զհնազանդութիւն առ ի բանէս.
Նախ առաջին երկիւղապէս [6]
Հարցումն արա՛ վարդապետէս։
Դի՛ր նպատակ զՅովհաննէս,
Որ ի զանջացն նա(յ)ապէս,
Չի մաքրեցաւ յայս մի յախտէս [7]
Յօղեաց [8] զիմաստս անձրևապէս.

Ի տեսական [9] բանս և յուժեղ.

Ներհակ լինի Տեառն որ ծանոյց.
Չի զմարգարիտն աղտեղացոյց,
Եւ զանհնազանդսն ոչ աւգտեցոյց։

Դուռն իմ նոցա է յոյժ փակած,
Որք շնչախառն ասեն թէ բաց.
Ներքուստ ձայնեմ թէ դուրսդ կաց,
Քանզի չունիս զիմաստից հաց.
Զունիք դուք բարք հնազանդ արանց
Ի ոչ պատմուճան մաքրասիրաց,
Մանկունք, վասն էր ասէք թէ բաց,
Քանզի չունիք զգեստ հարսանեաց։

Երգեմ ձայնիւ ես նուագ [2],
Կոչեմ զձեզ իմ փափագող,
Յառագաստ իմ [3] դուք էք ընակող
Եկայք կերայք զհաց իմ ազդաւոր [4]։
Արուեստ իմ գոնէ [5] բաղդատաւոր,
Սրատեսողացն իմ ես խնդրաւոր,
Վասն այսորիկ եմ արտաքսաւոր
Կուրացն, որ ոչ են իմ տեսաւոր։

Զհանգամանս և զղհանդէս
Զհնազանդութիւն առ ի բանէս.
Նախ առաջին երկիւղապէս [6]
Հարցումն արա՛ վարդապետէս։
Դի՛ր նպատակ զՅովհաննէս,
Որ ի զանջացն նա(յ)ապէս,
Չի մաքրեցաւ յայս մի յախտէս [7]
Յօղեաց [8] զիմաստս անձրևապէս.

Ի տեսական [9] բանս և յուժեղ.

Տեսակս ունի խոր և զաւրեղ.
Չի թէպէտ ոմն իմաստաղեղ
Սկիզբն իմաստից դնէ զերկիւղ 10,
Սակայն սա մայր է բաղմաբեղ,
Կաղմէ պտուղ քաղցր և համեղ,
Թէ զսա սիրես, լինիս բանեղ,
Գեղգեղատիայլ քան զբիւրեղ:

Ընդ այս բանիս և զայս յաւդեա՛
Վարդապետին սիրով անսա՛.
Մի՛ դու լինիր երբ անզգայ
Անընդունակ խրատու նորա:
Լե՛ր օրինակ Սամուէլայ.
Թէ նա զիա՛րդ անսայր Հեղայ.
Եւ ոչ Ովինի Փենեհեսեայ 11,
Որք քամահող գտան նմա:

Թէ զքեզ խրատէ ազդօղաբար 12,
Մի՛ երկնչի՛ր անյուսաբար.
Եթէ սիրէ զքեզ հայրաբար,
Մի՛ վատահիր որպէս տիմար 13:
Թէ ապտակէ իշխանաբար,
Մի՛ երկմտիր ծառա(յ)աբար.
Այլ աղերսեա՛ որդիաբար
Շարժեա՛ ի գոյթ 14 որպէս զհայր:

Ժրացի՛ր մանո՛ւկ իմ խոհական.
Վասն այն կրկնէ 15 վերստին բան,
Զվարդապետին քում հրաման
Մի՛ երկրորդեր կրկին անգամ:

Յոքունք շնորհաց ոչ աւգտեցան,

Որք անհնազանդ նմին գտան.
Բաղումք հասին ի կէտ ուսման.
Թէ 16 անշնորհ, ներհունացան:

Իսկ այս բանիս լե՛ր հաւանաւղ,
Առ ապացոյց Յակոբ խաբաւղ.
Որ եղև նա ելբև զգողղ,
Հնազանդութիւն եղև սիրաւղ 17:
Երէցն Եսաւ ապստամբօղ
Անդրանկութեանն կորուսաւղ,
Թէպէտ յետոյ եղև ժառղ,
Չնա Յակոբայ ծառայ եթողղ:

Լսաւղութիւնն է քեզ բարի,
Մանո՛ւկ դու լեր զգաստ և արի.
Արա՛ զկամքդ կաւ բրտի
Առ խրատուն վարդապետի:
Քանզի այս է խաչն Յիսուսի,
Որ պահանջէ յամենայնի,
Չի ի յանձուկ ճանապարհի
Նա ընթանայ, որ զայս ունի:

Խորհուրդ բանամ քեզ գիտութեան.
Առ ի շահից հնազանդութեան.
Զուշիմութիւն զգաստական,
Զհամեստութիւնն մաքրական:
Որք և սոցունց բարք կազմեցան,
Հասին ի կէտ մարդկութեան,
Ի մարդկանէ յոյժ յարգեցան,
Եւ Աստուծոյ հաճոյական:

Ծանի՛ր և զայս, մանո՛ւկ համեստ.

Չհամեստութիւն մասանց արուեստ,
Ա՛ռ զխրատ յինէն պահեստ,
Քո(յ)ին բարուցդ արա զգեստ։
Եւ թէ նստիսդ, և թէ յառնեսդ,
Եւ թէ խօսիսդ, և թէ լռեսդ,
Յամենայնի լէր դու համեստ,
Մի՛ ըստամբակ լինիր և հեստ։

Նարգեա՛ սահման յանձինդ քո,
Յորժամ նստիս ընդ եղբարս քո,
Մի՛ զկուռսդ քո տացես յորմս,
Մի՛ մեկներ զոտդ ըստ անասնոյ։
Մի՛ հայեսցես այլ ընդ այլոյ։
Մի՛ թանձրասցիս լերբ ի քնոյ։
Այլ գծուռնիս քո ուղիղ մաշտ,
Ծածկեա՛ զմարմնդ հանդերձիւ քո։

Հասարակաց զխրատս պահեա՛։
Չվերոգրեալս ոտուգիւ իմա՛։
Բայց զվարդապետս այսպէս պատուեա՛։
Կանգուն կալով, սպասաւորեա՛։
Թէ հրամա(յ)է, ապա բազմեա՛,
Եւ զգաստութեամբ զնա նկատեա՛։
Թէ խրատ տացէ, ա՛ռ և զմայլեա՛։
Ապա թէ ոչ բանս ինչ խոսի՛։

Զայն խրատու վարդապետին
Քեզ քաղցրասցին քան զմեղուին
Որպէս յերբեմն Յիսուսին
Հարիւրաւոր յերկիր բարին։
Եթէ տացես պատասխանին,

Հաւանակ նմա լեցին,
Որպէս երբեմն ի տաճարին
ԶՏեառն Յիսուսէ զարմանային։

Զամբարապէս, Մանո՛ւէ, փայլիս։
Թէ իմասցիս զխորհուրդ բանիս։
Ընդ քո յեղբարսն յորժամ ճաշիս,
Խենէշաբար մի՛ կորասցիս։
Իբր անասնոյ մի՛ փութասցիս,
Որպէս զգազան մի՛ յաբգեսցիս։
Զգլուխդ ուղիղ կա՛լ ըստ խրատիս,
Որ յամենայն մարդկան գովիս։

Ճառեմ զբանս իմ աւրինակով,
Մանո՛ւէ, լո՛վ զխրատս իմ հոգւով,
Պարկեշտ պահեա՛ զքեզ կերակրով,
Զդանիէլն անսուաղ կալով։
Որ զտասունն պահելով,
Պայծառացաւ մաքուր հոգւով։
Արժանացաւ սուրբն սրտով
Զառաջնիկայն դուշակելով։

Մանո՛ւէ, կամիմ քեզ բան խօսել,
Զխորս իմաստից ուսուցանել,
Զի մանկութեամբդ դու ես արբեալ,
Դարձեալ զենուով մի՛ զմայլիլ։
Պատ է քեզ զայն բաժակն ըմպել,
Զոր Տէրն ասաց Կամիմ ըմպել,
Եւ այն մանկանցն նմանել,
Որ ի Սկիւթ լեառն էին ընակել։

Յորժամ ի Սկիւթ գենի բերաւ,

Առնուլ եղբարցն անգիտակաւ,
Մանուկ եղբայր ոմն տեսաւ,
Եւ ի տեղուն վուրթով վախեաւ։
Փախստենէն տունն ելաւ,
Որ ի յընթացս հանդիպեցաւ,
Զոր առաջնորդն ուրախացաւ,
Գովմամբ ի գերկս լուր ընկալաւ։

Նորոդ մանուկ իմ բանաւոր,
Յորժամ խօսիս, լեր երկնաւոր.
Պահեա՛ զձայնդ չափաւոր,
Կազմեա՛ զբանդ կարգաւոր։
Զգլուխդ կա՛լ խորհրդաւոր,
Դիտեա՛ ակամբդ նուրբ և խոր,
Կցեա՛ զձեռքդ գիտաւոր,
Որով կոչիս այր ժտաւոր։

Ճնորհաց սերո՛ղ, զերբատս իմ յարգեա՛
Եւ առաջի ծերոց լռեա՛.
Դու իմաստնոց ունկնդրեա՛,
Եւ զծեր եղբարսն մեծարեա՛։
Զկրտսեր եղբարսն խրատեա՛,
Զհիւրսն յօժար սրտիւ պատուեա՛.
Ամենեցուն երկրպագեա՛,
Եւ անպիտան ծառայ ասա՛։

Ուշիմ մանո՛ւկ, և զայս ընկա՛լ,
Ծեր տեսանես, խոհեմ եղբայր,
Եթէ խաւսին բանս ինչ յարմար,
Կա՛ց դու լռին և անբարբառ.
Տե՛ս Յովհաննէս զիարդ մնայր

Ի դուրս այրին, մինչ Պետրոս գայր.
Տե՛ս զՊօղոս զիարդ անսայր
Նա Սիմովնի, մինչ ի Հռոմ կայր։

Զէ պարտ, համբա՛կ, քեզ ծիծաղել,
Այլ թէ հարկիս, միայն ժպտի՛ր,
Մի՛ ընդ եղբարսն վստահի՛ր,
Եւ մի՛ ի չար կատակն յարի՛ր։
Զերկրովի մանկանցն յոռիր,
Որք պատժեցան յարջէ, ծանի՛ր.
Զեղիսէի կատակն ուսի՛ր,
Եթէ զիարդ, և զդուշացի՛ր։

Պատուիրեմ քեզ ի յայս մարդել,
Եւ զհայելոյն ոճն ուսանել.
Մի՛ գեղջապէս հայեցս առնել,
Մի՛ յարաժամ երս ինչ մրշնել։
Այլ ի կողմանց գաղտ նկատել,
Բնաւ գլխոյն դէթ չշարժել.
Թէ շահաւէտ է, նշմարել,
Եւ զորոնումն անյայտ առնել։

Զահ քեզ վառեմ վոյչղաղպէս,
Թէ զոր խրատեմս, առնես այսպէս.
Թէ ծարաւիս դու ի հանդէս,
Պահեա՛ զքեզ ժուժկալապէս.
Թէ գայ օրանչն անառնապէս,
Պնդեա՛ զշրթունսդ մարդկապէս.
Թէ ըմբես ջուր առանձնապէս,
Մի՛ հնչեսցես ձայնդ պէսպէս։

Ռամիկ արանցն, որ անմաքուր,

Մի՛ նախանձիր, մանո՛ւկ մաքուր.
Որ զպատճառ և զբարուր
Մեզք քեզ յօդեն իբր զբլուր։
Այլ զպատճառացն չար անուր
Ի քում բարուցդ արա թափուր.
Թէ բորբոքիս, ա՛ռ դու զքուր,
Զնա շիջո՛ց որպէս զհուր։

Սիրեա՛, որդեա՛կ իմ զգայուն,
Զիմաստս հոգւոյն խոր և անհուն.
Ոչ զմեծութիւնս այս, որ է խուն,
Ոչ զկենցաղս այս անկայուն։
Այսմ տարացոյց զի՛ր և քանոն
Զմանուկն ուշիմ զՍողոմոն.
Որում մաղթեաց զՏէր գերագոյն,
Տո՛ւր ինձ զիմաստս սուրբ Հոգւոյն։

Վեհանկար յուսումնասէր,
Արա՛ զընութիւն քո հարցասէր
Որպէս Յիսուս, որ հարցանէր,
Եւ ի տաճարն հետաղաւտէր։
Ոչ թէ կարաւտ էր, զայն առնէր,
Այլ զքեզ ինքեամբ ուսուցանէր
Առնել զմանուկդ ստուաճասէր,
Կազմել զհամբակդ իմաստասէր։

Տե՛ս և հայեա՛ց դու, ո՛վ համբա՛կ,
Որ յիմաստից եղեր հասակ,
Յերկուց իրաց զդուշ լի՛ր, համբա՛կ,
Պահել զիմաստս քո յստակ։
ԶՅովսէփ նմին զի՛ր հպատակ,

Լի՛ր նախանձուն անընդունակ,
Միւսոյն արա՛ նա քեզ պսակ
Քակեալ յախտէն հանկանակ։

Բաբունաւրէն զոր ասացի,
Զհնազանդութեան շահն ցուցի,
Մանո՛ւկ, դարձեալ երկրորդեցի,
Զի հեշտալի ճառս լինձ թուի։
Այսմ օրինակ բազում ունիս,
Դու հաւաքեա՛ ի մի տեղի.
Հիւսեա՛ պսակս ցանկալի,
Դի՛ր ի գլուխդ պանծալի։

Յուցից զհայրն, որ ետ չոր վայր
Աշակերտին թէ տնկեա՛ զայդ.
Տո՛ւր յարաժամ ջուր յորդառատ,
Զոր և արար մանուկն զկրատ։
Զի թէպէտ ջուրն էր յոյժ բացատ,
Այլ նա զերկամ եղև աշխատ.
Զոր ետ պտուղ, զի էառ արմատ.
Դու հաւատա՛, որդեա՛կ, հաստատ։

Իսեալ ընդ այս բանիս յարմար
Զվեհ ոմն արքայ, որ փորձաբար
Կոչեաց զորդիսն իւր հաւասար,
Ետ ի նոսա զակն պայծառ։
Ասաց փշրել յաւժարաբար,
Զոր չարարին հրաժարաբար,
Միայն կրտսերն զհրամանն արար,
Եւ զտէրութեան ժառանգն էառ։

Փայլեա՛, մանո՛ւկ, հնազանդաւորէն,
Մարդեա՛ց ի վեհ . . . . (Թերի)

Տես ծանօթ. 19. Ձեռագիր մօտ. 1381 թ.

20.

Զորս են կարգ գիտութեան գիտնականացն: Նախ՝ որ գիտէ. և Թէպէտ գիտէ, զի գիտէ, ասէ. Զեմ բաւական խօսելոյ. սաղ եմաստուն է և հեղ. ուսո՛ր ի նմանէ:

Երկրորդ՝ գիտէ, որ ոչ գիտէ. և խոստովանի զանգիտութիւն իւր, Թէ Ոչ գիտեմ. և սա բարի է, ուսո՛ զսա:

Երրորդ՝ և ոչ գիտէ, և անգիտանայ Թէ ոչ գիտէ, և խօսի անգիտաբար. սա յիմար է, և ոչ գիտէ զտկարութիւնն իւր, որպէս զչար հիւանդ զարթո՛ զսա:

Զորրորդ՝ ոչ գիտէ, և գիտէ, զի ոչ գիտէ, բայց սնափառ հպարտութեամբ ակի և յանդգնի խօսել, զոր ոչ գիտէ. այնպիսին հպարտ է և տգէտ, լիրբ է և ամբարտաւան. վախի՛ր ի նմանէ:

* * *

Ոտանաւոր յաղագս վերոյասացեալ բանիցդ

Քանզի գիտունն ընդ անգիտին
Ի միասին մարդիկք կոչին,

Վասն այնորիկ քննել պարտին,
Թէ զինչ իրօք զանազանին:

Զորս են ուսմունք և կերպ նոցին,
Իւրաքանչիւր բանականին,
Որք ի յոքունցս ցուցանին
Պէսպէս շնորհօք աստուածային:

Նախ որ գիտուն գոլ համարին,
Եւ են այնպէս, որպէս ասին,
Այնք վարդապետ են ըստ բանին,
Մեծարեցի՛ք ըստ պատշաճին:

Երկրորդ՝ գիտողքն զչափ անձին
Խոստովանին զգիտել բանին.
Սոքա բարի են ըստ կարգին,
Ուսուցանել պարտ է սոցին:

Երրորդ՝ անգէտն են և չնչին,
Որք ի յանձինս իւրեանց չհային,
Սոքա յիմար քնով ննջին,
Զարթուցանել պարտ զնոսին:

Զորրորդ՝ անգէտքն ճանաչին,
Որք ոչ գիտեն, այլ սուտ պարծին.
Սոքա հպարտ են և մոլին,
Մի՛ ընդունիր զբանս նոցին:

Դարձեալ է չար յոյժ դառնագին,
Եւ վատաբախտ յիւրում մասին,
Որ ոչ գիտէ զարհեստ բանին
Ի ոչ ուսանել կամի զբարին:

Եւ առաւել չար է կրկին,
Թէ ոչ ունի զսէրն ընկերին,
Եւ զգիտութիւնն լուր ըստ կարգին
Զուսուցանէ կամեցողին:

Այլ առաւել մերձ է չարին,
Քան թէ բարւոյն որով լինին,
Որ ուղղեսցէ զայլս ի բարին,
Եւ ինքն է թիւր գործօք չարին:

Սա Աւետիքն է Օգոստին
Քարոզողացն եղբայր կարգին
Զպակասութիւնն լուրումն անձին
Խոստովանել գրէ ինքնին:

Կամ ի Մենդեան մերոյ Փրկչին
Ոչի և ձա Թվականին
Փետրուարի օրն վերջին
Էր քսանևինն ըստ նահանջին:

Զորում աւուր բանս յարգին
Ի Վընէժոյ եկեղեցին,
Զձեզ աղաչեմ զամենեսին,
Ինձ շնորհեցէք զողորմեայն:

Զեռ. մօտ 1381 թ.

21.

Տաղ վասն Պետրոսի առաքելոյ երազին [1]

Պետրոս երազ էր [2] տեսեր
[Ելեալ պատմէր Պաւղոսին. Գ. կրկնեա՛]
[Փոքրիկ այգի մի տեսայ]
[Փոքրիկ հնձան մ'ի վերայ]
[Փոքրիկ հնձանին վերայ]
[Բարակ առուակ մի տեսայ]
. . . . . մի եմ տեսեր [3],
Բարակ առուիկ մի [4]:
Բարակ առուի եզերին [5]
Նոր բարունակ մի եմ տեսեր,
Նոր բարունակ մի եմ տեսեր [6]:
Նոր բարունակին վերայ
Ոսկի խնձոր [7] մի եմ տեսեր,
Ոսկի խնձոր մի եմ տեսեր [8]:
Ոսկի խնձորին [9] վերայ
Ոսկի խնձորին վերայ [10]
Խայտ աղաւնի մի եմ տեսեր
Խայտ աղաւնի մի եմ տեսեր [11]:
Պօղոս նստեալ յաթոռին
Զերազն պատմէր Պետրոսին [12]
Պօղոս էր. [13]
Եղբայր [14] երազդ ի բարին.
Եղբայր երազդ ի բարին [15]

Երնէկ երաշ տեսնողին.
Երնէկ երաշ տեսնողին 16:
Փոքրիկ այգին որ տեսար 17,
Չփոքրիկ այգին որ տեսար,
Երուսաղէմ քաղաք է,
Երուսաղէմ քաղաք է 18:
Չփոքրիկ հնձանն որ տեսար,
Չփոքրիկ հնձանն որ տեսար 19,
Սողոմոնի տաճարն է
Սողոմոնի տաճարն է 20:
Չբարակ առուն որ տեսար,
Չբարակ առուն որ տեսար 21.
Գետ Յորդանան վտակն 22 է
Գետ Յորդանան վտակն է 23.
Չնոր բարունակն որ տեսար,
Չնոր բարունակն որ տեսար 24.
Աստուածածին սուրբ կոյսն է
Աստուածածին սուրբ կոյսն է 25:
Չոսկի խնծորն 26 որ տեսար,
Չոսկի խնծորն որ տեսար 27,
Իւր Միածին Որդին է,
Իւր Միածին Որդին է 28:
Չխայտ աղաւնին որ տեսար,
Չխայտ աղաւնին որ տեսար 29,
Աղաւնակերպ 30 Հոգին է,
Աղաւնակերպ Հոգին է 31:

Տես ծանօթ. 21. Ձեռ. տաղարան 1695 թ.

22.

Տաղ ուրախութեան եւ խաղու

Ահա ցնծայը ծովն ու ծփայը,
Ալին գալին տայը.
Ծովն յարևուն մանը աւաղին
Խաղայը ծփայը 'ւ ալին գալին տայը:

Ահա խաղայը նաւն ի ծովին,
Ալին գալին տայը.
Նաւն ի ծովին,
Ծովն յարևուն մանը աւաղին
Խաղայը ծփայը 'ւ ալին գալին տայը:

Ահա տեսէք թ'ինչ կայ ծովին,
Որ նաւն ուռամը գայը.
Ահա տեսաք ըմբ կայ նաւին,
Որ նաւն ուռամը գայը:
Բեմբն ի նաւին,
Նաւն ի ծովին,
Ծովն յարևուն մանը աւաղին
Խաղայը ծփայը 'ւ ալին գալին տայը:

Ահա տեսէք թ'ինչ կայ բեմբին,
Որ նաւն ուռամը գայը.
Ահա տեսաք վէմ կայ բեմբին,
Որ նաւն ուռամը գայը:

Վէմն ի ջեմբին,
Բեմքն ի նաւին,
Նաւն ի ծովին,
Ծովն յարևուն մանը աւազին
Խաղայը ծփայը 'ւ ալին զալին տայը։

Ահա տեսէ՛ք թ՚ինչ կայ վիմին,
Որ նաւն ուռամը գայը։
Ահա տեսաք խա՞չ կայ վիմին,
Որ նաւն ուռամը գայը։
Խաչն ի վիմին,
Վէմն ի ջեմբին,
Բեմքն ի նաւին,
Նաւն ի ծովին,
Ծովն յարևուն մանը աւազին
Խաղայը ծփայը 'ւ ալին զալին տայը։

Ահա տեսէ՛ք թ՚ինչ կայ խաչին,
Որ նաւն ուռամը գայը։
Ահա տեսաք տա՞կ կայ խաչին,
Որ նաւն ուռամը գայը։
Տակն ի խաչին,
Խաչն ի վիմին,
Վէմն ի ջեմբին,
Բեմքն ի նաւին,
Նաւն ի ծովին,
Ծովն յարևուն մանը աւազին
Խաղայը ծփայը 'ւ ալին զալին տայը։

Ահա տեսէ՛ք թ՚ինչ կայ տակին,
Որ նաւն ուռամը գայը։
Ահա տեսաք ծա՞ռ կայ տակին,
Որ նաւն ուռամը գայը։
Ծառն ի տակին,
Տակն ի խաչին,
Խաչն ի վիմին,
Վէմն ի ջեմբին,
Բեմքն ի նաւին,
Նաւն ի ծովին,
Ծովն յարևուն մանը աւազին
Խաղայը ծփայը 'ւ ալին զալին տայը։

Ահա տեսէ՛ք թ՚ինչ կայ ծառին,
Որ նաւն ուռամը գայը։
Ահա տեսաք ճի՞ւղ կայ ծառին,
Որ նաւն ուռամը գայը։
Ճիւղն ի ծառին,
Ծառն ի տակին,
Տակն ի խաչին,
Խաչն ի վիմին,
Վէմն ի ջեմբին,
Բեմքն ի նաւին,
Նաւն ի ծովին,
Ծովն յարևուն մանը աւազին
Խաղայը ծփայը 'ւ ալին զալին տայը։

Ահա տեսէ՛ք, թ՚ինչ կայ ճղին,
Որ նաւն ուռամը գայը։

Ահա տեսաք բո՞ւն կայ ճղին,
Որ նաւն ուռամբ գայը։
Բունն է ճղին,
Ճիւղն է ծառն,
Ծառն է տակին,
Տակն է խաչին,
Խաչն է վիմին,
Վէմն է բեմբին,
Բեմբն է նաւին,
Նաւն է ծովին,
Ծովն յարևուն մանը աւազին
Խաղայը ծփայը 'ւ ալին զալին տայը։

Ահա տեսէ՛ք թ՛ինչ կայ ընին,
Որ նաւն ուռամբ գայը։
Ահա տեսաք ձո՞ւ կայ ընին,
Որ նաւն ուռամբ գայը։
Զուն է ընին
Բունն է ճղին,
Ճիւղն է ծառին,
Ծառն է տակին,
Տակն է խաչին,
Խաչն է վիմին,
Վէմն է բեմբին,
Բեմբն է նաւին,
Նաւն է ծովին,
Ծովն յարևուն մանը աւազին
Խաղայը ծփայը 'ւ ալին զալին տայը։

Ահա ցնծա՛ն ծովն ու ծփայը,
Ալին զալին տայը։
Ծովն յարևուն մանը աւազին
Խաղայը ծփայը 'ւ ալին զալին տայը։

Ահա՛ տեսաք նաւն է ծովին,
Բեմբն է նաւին,
Վէմն է բեմբին,
Խաչն է վիմին,
Տակն է խաչին,
Ծառն է տակին,
Ճիւղն է ծառին,
Բունն է ճղին,
Զուն է ընին,
Զա՛գ է ձուին
Խայտայը զուարթ, որ նաւն ուռամբ գայը,
Ալին զալին տայը։

Ահա տեսաք ձա՛գն է ընին,
Որ նաւն ուռամբ գայը։
Զագն է ընին,
Բունն է ճղին,
Ճիւղն է ծառին,
Ծառն է տակին,
Տակն է խաչին,
Խաչն է վիմին,
Վէմն է բեմբին,
Բեմբն է նաւին,
Նաւն է ծովին,

Ծովն յարևուն մանը աւազին
Խաղայը ծփայը 'ւ ալին զալին տայը:

Ահա թռաւ ձագն ի ընէն.
Թռաւ, թառաւ թև՚ն ի խաչին.
Թառն ի թևին,
Թևն ի խաչին,
Խաչն ի տակին,
Տակն ի վիմին,
Վէմն ի բեմբին,
Բեմբն ի նաւին,
Նաւն ի ծովին,
Ծովն յարևուն մանը աւազին,
Խաղայը ծփայը 'ւ ալին զալին տայը:

Ահա ցնծա՛ցը ծովն ու ծփայը,
Ալին զալին տայը.
Ձագն ի թառին թևն ի խաչին,
Ձագն յարևուն ծովն ի ծոցուն.
Խայտայը թռչէը քաղցրիկ օդուն.
Ծովն յարևուն մանը աւազին
Ցնծայը ծփայը 'ւ ալին զալին տայը:

Օրհնեա՛լ է Աստուած:

Տես ժաՆօր. 22.



ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ

1.

Տաղիս ընագիրը մեր սեփական տաղարանից է հանուած, որի թուականն է 1695. նոյնը տեսել ենք և 1617 ին գրուած: Վերնագիրն է «Յարմարեալ բանս ուրախութեան ի Խաչատուր վարդապետէ Խարբերդացւոյ.» մնացեալներն հիւսում են «յարմարեալ բանս ուրախութեան:» Բովանդակութեամբ ու ձևով Խարբերդացու այս տաղին նման է Գրիգորիս Աղթամարցու «Վասն վարդի և պլուլպուլի երգը» (տ. Գր. Աղթ. և իւր տաղերը, Թիֆլ. 1898): Խարբերդացու տաղի մէկ տունն հայերէն է, միւսը նորա թուրքերէն թարգմանութիւնը ոտանաւորով. վերջինս աւելորդ համարեցինք գնել այստեղ՝ կրկնութիւնից խուսափելու մտքով:

2.

Տաղիս հեղինակն է Յակոբ երէց Սսեցի. մնացեալներն հիւսում են «Յակոբ երէց ասաց.» յօրինման տարին է 1585 թուականը, որ է 80+

5+1000+500=«Զեռշինէ թուին:» Այսպիսի բառախաղով թուականի գործածութեան առաջին օրինակը չէ այս: Մարտիրոս Ղրիմեցու մի տաղի թուականն է «Զէնա»=700+7+400+1=1108 ազգ. կամ 1659 վրկ. թուին (տ. Նոր ժողովածու Ա., 9): Նոյն կերպով կազմուած է մի այլ յիշատակարանի թուականը (տ. Թոր. Աղբ. Ա. 226), որ է «Թագն է ճոխալի» կարդա՛ 9+1+3+400+7+100+600+40+1+30+20=1762:

7.

Այս տաղն օրինակուեցաւ 1617 թ. գրուած տաղարանից. 1695 ին գրուած մեր սեփական տաղարանի ցանկի մէջ ձՇէ տաղի վերնագիրն և առաջին խօսքերն են «Տաղ վասն ի վերայ սեղանի ասելոյ. Այսօր զքեզ տեսայ և ուրախացայ,» ընագիրը չկայ: Հայերգի մէջ էլ (եր. 103) նոյն տաղն հրատարակուած է, թէ որ թուականի տաղարանից հանած, յայտնի չէ: Աչքի ընկնող տարբերութիւններն են. 1, Վերնագիր «Այլ տաղ գեղեցիկ և լաւ.» 2, ի Տեառնէ. 3, ծաղկանց. 4, որ երևեցայ. 5, ինչ. 6, աշխարքիս. 7, պարծանք էիր հիմայ, 8, լուսով, 9, խնդրեմք, 10, ծերուկ, 11, հաղար խալիֆայ. 12, սիրով ի քեզ գայ, 13, շրթամբք քաղցրագին առ մեզ խօսակցեա՛, 14, որ քո տիպ պատկերդ, զինչ որ լուսին կայ, 15, թշնամիք ամէնք ի քէն հեռանան, 16, մեծութեան խիստ լիա-

նան. 18, ցանկայ, 19 տեսլեան քո պատկերիդ, 20, բամեալս մեղաւորս, 21, հոտով կացի և առողջացայ, 22, մեղաց, 23 Քեզ Մարտիրոս եղայ, 24, հետևում է մի այլ տող ևս «Խիստ եմ քեզ կարօտած, սէր քո առ իս գայ:»

9.

Մեր առաջ բերած 5, 6, 7, 8 և 9 տաղերի հեղինակները, թէև միևնոյն Մարտիրոս անունն ունին, բայց միևնոյն անձինքը չեն: Մինչ ցայս մեր հրատարակած տաղերին նայելով, եղել են Մարտիրոս անունով երեք երգիչներ:

Առաջին՝ Մարտիրոս երէց Խարբերդացի, որ յօրինել է Զախուի երգը (տ. Նոր ժողովածու Բ. 34 և Գ. Է.): Ինչպէս Հ. Տաշեանի ցուցակից երևում է, նոյն երգիչն ունի նաև 1, «Տաղ վասն ուրախութեան. Այլն ասէ Այսօր ըմբեմք. Բենն ասէ Բերէք գինի.» 2, «Տաղ սեղան օրհնելոյ է. Աւրհնեսցուք մեք միաբան ըզՀայր և զՈրդի և զսուրբ Հոգին.» 3, «Տաղ Աստուածածնին խիստ գեղեցիկ. Անմահ արքային տաճար, մեղ յոյս ապաւէն և ճար.» և 4, «Այլ տաղ գեղեցիկ Ս. Աստուածածնին. Անճառ ճառագայթ լուսոյն ի քէն մարմնանայ:» Զորսն էլ այբբենական երկտողեան ոտանաւորներ են Ա—Բ*:

Երկրորդն է՝ Մարտիրոս Խարասարցի **, այլ

*) տ. Ցուց. Վիէն. Մխ. Մաս. 795:

**) Ղարասար անունով բերդ կայ Վանայ կողմերում. տ. Մանանայ 368:

կերպ Ղարաճասրի, կամ ըստ ՆՌաքաղի, Խարա-հիսարցի (տ. Նոր ժող. Բ. 47 և 49): Սորա տա-ղերն են՝ 1, «Այսօր խմենք քաղցր և յորդոր.» 2, «Այսօր տօնեմք, ձեզ աւետե՛ս» 3, «Աստուած զայս տունս շէն պահէ», 4, «Աստուած օգնէ թագաւորին», 4, «Աստուած օգնէ մեր կնքա-հօրն» և 6, «Այսօր զքեզ տեսայ և ուրախացայ.» տաղերը, որոնց ձևի և ոճի միութիւնից էլ երե-ւում է հեղինակի միութիւնը:

Երրորդն է՝ Մարտիրոս Ղրիմեցին, որ ժա-մանակով առաջին երկուսից կրտսեր պէտք է լինի, որովհետև նոցա տաղերն 1617 թուի գրը-չագրի մէջ կան, մինչդեռ Ղրիմեցու մեզ ծա-նօթ տաղերն աւելի ուշ ժամանակի են, նորա մի տաղն «Ցաղագս քաղաքին Ամասիա (տ. Նոր ժողով. Ա. 9) յօրինուած է «չէնա» կամ 1659 թուին. մեր գրչեայ տաղարանում, որ 1695 ին է գրուած, նորա տաղերից վերջինն յօրինուած է 1681 թուին. ուրեմն 1659 — 1681 թ. այն ժամանակամիջոցն է, երբ Մ. Ղրիմեցին յօրի-նում էր իւր տաղերը: Վերը բերուած 9 տաղի վերջին տունը մեզ յայտնում է, որ 1669 թուին նա եղել է Երուսաղէմի պատրիարք. այս և ցոյց է տալիս, որ երգիչն այն Կաֆացի կամ Ղրի-մեցի Մարտիրոս վարդապետն է, որ Անթապցի Եղիազար կաթուղիկոսի գործերի մէջ մերթ հա-կառակ և մերթ նպաստաւոր մասնակցութիւն ունեցաւ: Ղրիմեցու մեզ ծանօթ տաղերի ցանկն այս է. 1, «Ցաղագս քաղաքին Ամասիա» (տ. Նոր

ժող. Ա. 9). 2, «Գովեստ Ս. Աստուածածնայ վանացն Անկիւրիոյ (տ. 9). 3, «Գովասանութիւն վասն այգեաց. Այգի զքեզ գովեմ կերպիւ զա-նազան» այբբենական երգը, որի միայն ա, գ, ք, տառերը կան մեր տաղարանի մէջ, իսկ վեր-նագիրն և առաջին տողն յիշուած են ցանկի մէջ. և 4, «Տաղ վասն սրբոյ Աստուածածնին, Մայր Անեղին սուրբ Տալիթայ Աստուածածին կոյս» տներն հիւսում են «Մարտիրոս վարդա-պետի.» յօրինման թուականն է 1681. Հ. Տա-շեանի Ցուցակում (տ. 894) յիշուած են և Ղ-ըիմեցի Մարտիրոսի զուարճալի երգերը, որոնք են «Բանք ծաղրածուք,» Սոֆիայու իրիցուն է» և «Զիլայեցի իրիցուն հաւի գովասանք:»

10.

Տաղս օրինակուեցաւ 1695 թ. ձեռագրից և համեմատուեցաւ 1617 և 1647 թ. օրինակ-ների հետ: Տարբերութիւններն այս են. 1, Վեր-նագիր «Տաղ անոյշ գինւոյ.» 2, սքանչելիս ի Գալիլեայ. 3, հինգ նկանակ հինգհազարին. 4, տաս սակառին լի. 5, զանուշ գինին. 6, առ-նուն կթխան ի ձեռս. 7, մեղեդի. 8, պարո-նայք. 9, սաւհպաթ, սուհբատ. 10, սուլահի. 11, մուղը, մշուռ. 12, մանուշակ փթթեալ ծա-ղիկ. մանուշակ շուշան ծաղիկ. 13, անուշա-համ է և. 14, սէր ու զպատիւ.. զգինին. 15, եաշմն ևս առաւ. 16, էլիկ գինի.—զմարդուն

սառաՁն և զմահակն ալվի գինի. 17, էլի գինի.
—լինի գինի. 18, յորժամ նստիս դու ի գինի. 19,
շատ մին խաւսիլ. 20, զքո ընկերոջն աղէկն, զընկերին զաղէկն. 21 մին ասիլ. 22, զայլոց մեղք հրապարակաւ.—զայլոց գործք հրապարակին. 23, տաս գինի առնուս և արբենաս.—երբ դու գինի ճաշիս և արբենաս. 24, վիճու կռիւ. 25, վաղիւն. 26, ընգեն. 27 Ի՛նրանէր. 28, ապա թէ դու. 19, պարառեալ, պարարես. 30, ընդես. 31, յոյժ ծուլանաս. 32, վերջքն գիժաը լինի և դու չիմանաս. 33, պատրաստեաց և մեղ. 34, բաժակ սուրբ անապական. 35, բիւր քանքարոյ է պարտական Աղարիան.—պարտական բիւր քանքարոյ. 36, սակաւիկ բանս որ ասաց գինուոյ վերայ. 37 քաղցր երգէք մէկ Հայր մեղայ. պահեսցէ Տէր զձեզ անվնասք ի աշխարհիս. 38 Աւրհնեցէք զԱստուած երգել Հայր մեղայ:

Գինու գովեստն և արբեցութեան պարսաւանքը տաղերով յայտնել են նաև Յովհաննէս Թլկուրանցին (տ. Յբ. Թլկ. և իւր տաղերը, Թ.), Աստուածատուր, Մարտիրոս Խարասարցի, Սարկաւագ Բերդակացի, Մարտիրոս Ղրիմեցի և այլք (տ. Նոր ժող. Ա. 9, Բ. 11, Գ. 18 և 19): Համեմատութեան համար դնում ենք այստեղ և ԺԸ. դարու երգերից մէկի հատուածները, որ յօրինել է Ամասիացին Գալուստ մականուանեալ Կայծակն: Սորա բոլոր տաղերի ժողովածուն լոյս է տեսել 1704 թուին Կ. Պոլսում «Լուսաշաւիղ» վերնագրով գրքի մէջ: Նորա մեծ մա-

սով կրօնական են, անագրուխներն հիւսում են «Գալուստ» կամ «Կայծակն.» Նորա երգը «Վասն գինոյ» այսպիսի հատուածներ ունի.

Յորժամ գինոյ վարջն գայ,
Մարդոյ սիրտն ուրախանայ.
Մատրվակն պատրաստ կայ,
Առնեալ գինի ածէ նայ: . . .

Յորժամ կթղայն չորրորդէ,
Գոյն երեսացն կարմրէ.
Չէտ պարոնիկ կռթընէ,
Սիրով ուտէ և ըմպէ: . . .

Յորժամ վեց քեահոէն ըմպէ,
Լեղուին զէքիր անցնէ.
Որպէս խելագար գրուցէ,
Զաջն և զձախն ոչ գիտէ:

Յորժամ եօթն թաս ըմպէ,
Սատանայի կոկովն է.
Խպըլիկ դև մտանէ,
Զամեն մարմինն դրդէ: . . .

Յորժամ տասն թաս ըմպէ,
Զձեռն և զոտն տայ ատնէ.
Կանգնել ոտից ոչ կարէ,
Որպէս անդամալոյծ է: . . .

Յորժամ տասներկու ըմպէ,
Զբերանն կարկամէ,
Իշմարով խօսի, ասէ.
Մկան, խոզու ձայն հանէ: . . .

Յորժամ տասն և չորս ըմպէ,
Այս աշխարհէն հրաժարէ,
Երկիրն անասնոց վոսկէ,
Ո՛վ տանուտէր, լաւ ծածկէ՛:

Առաւօտուն հաղորդ՝
Ղահվալթիկ ճէրիմէ.
Աթալան կիթոն ասէ,
Թթու տուէք մանմուր է:...

Թէ ժամ գնայ, աղաչէ,
ՅԱստուծոյ գինի խնդրէ,
Այգի, եարան և մէղէ,
Խելքն ու միտքն կարան է:

Քրիստոնէից ատէթ է.
Հաւատ, յոյս, սէր միշտ ուղէ.
Ճունուն երեք բան խնդրէ,
Թուքուն, ըրախի, գինին է:

Օր մի հարբած մի տեսայ.
Անկեալ էր աղբին վերայ.
Ուրախ լինէր՝ սատանայ,
Քնէր զէտ տոշկի վերայ:
Կանայք թրմպուկով գային,
Պարելով խաղ առնէին,
Բարձր ձայնիւ երգէին,
Թաղեալ էր ի մէջ աղբին:
Եթէ ոք գինի ըմպէ,
Երեք թասն հէլալ է.
Բաժակ ուրախարար է,
Անուշ ասեմք վայելէ:...

Պայծակն գինի չուղէ,
Հարբածներէն ածիզ է.
Վասն այսորիկ խրատէ,
Քիչ ըմպեցէ՛ք պատուիրէ:

Ս. Լուսաբաշ. եր. 199—202.

12.

Այս տաղն օրինակուեցաւ 1647 թ. գրրուած տաղարանից. նոյնը լոյս է տեսել Գամ. Քաթիպայի Ազգ. երգարանի և Մ. Մինասարեանցի Քնար Հայկականի մէջ: Ինչպէս բաղդատութիւնից կըտեսնուի, կան այդ հրատարակութեան մէջ թերի կամ աւելորդ մասեր: Մեր առաջարկած օրինակի առաւելութիւնն այն է, որ նախ յայտնի է թէ ո՞ր թուականի տաղարանից է հանուած և երկրորդ թէ ո՞վ է հեղինակը:

14.

Առեղծուածներից Ա. և Բ. գտնուում են 1642 ին Նոր Ջուղայում տպած Սաղմոսի (ժամագրքի) մէջ: Ա. մասի վերջում կայ այսպիսի յաւելուած. «Ո՛վ վայելող սուրբ մատենիս, մաղթել յիշեմ (sic) զեղկելիս Ազարիայ շարող տարիս Դաւթի սրբոյ երգարանիս:» Նոյն մասի մէջ սոյն տարբեր ընթերցուածները կան. 1, և ամէն մէկ. 2, գունով էին. 3, անքօտած: Բ.

մասի առաջին քառատողը կայ և Ն. Շնորհալու առակների մէջ (տ. Առ. Լ.):

Եթէ «շարող տառիս» ասելով Աղաբեան ներկայացնում է իրեն իբրև հեղինակ Սաղմոսին վերաբերեալ առեղծուածի (այլ ոչ լոկ դրաշարը), այն ժամանակ, աչքի առաջ ունենալով 1647 թուին դրուած տաղարանը, որից քաղել ենք 10, 11, 12 և 13 տաղերը, կարող ենք համառօտել Աղաբեայի ոտանաւորների մեզ ծանօթ ցանկն այսպէս. 1, Առեղծուած Ա. 2, Տաղ վասն դինուոյ (10), 3, «Արարիչ Հայր երկնաւոր (11). 4, Տաղ Ադամայ (12). 5, Բէէն մինչև ի յայրն (13). 6, Ողբ դատաստանի է ասացեալ. «Աւրհնեալ է կամքն աստուածային.» այս տաղի վերջին տողերն են «Աղաբիա ողորմելի տարեհիկուսեալ ես յաշխարհն, զերի՛ լինի բեզիկ ճարակ խառնել ի դասս աջակողմի.» 7, Տաղ հրեշտակաց և հրեշտակապետաց և ամենայն երկնային զօրաց. «Թագաւորն արարածոց Քրիստոս Աստուած». 8, Տաղ ծննդեան և յայտնութեան Տեառն Աստուծոյ մերոյ. «Այսօր լցաւ խոստումն բանին». վերջին տողերն են «Աղաբիա ես անարժան ծառայ եմ Տեառն և սուրբ Կուսին, ով որ կարդայ կամ յուսանի, յիշմամբ առնէք զիս արժանի»: Վերջին երեք տաղերը շատ աղճատուած լինելու պատճառով չկարողացանք ամբողջ հանել:

Գ. առեղծուածը գտնւում է նաև ս. Էջմիածնի մատենադարանի թ. 102 գրչեայ օրինակի մէջ՝ գրուած Ն.=981 թուին: Վերնագիրն է «Իմաստութիւն Դաւթի քերթողի:» Նոյն վերնագրով հրատարակուած է և 1848 թ. Բաղմավէպի մէջ (տ. եր. 192): Մեր մագիստրոսն 1862 թ. ճառաքաղում նոյնը հրատարակել է առանց յիշելու գրչութեան տարին. այնտեղ նորա վերնագիրն է «Մովսէսի Բենեցւոյն * շինեալ բանքս աղնուագոյն.» Նորա ասելով Լաղաբեան ճեմարանի մի այլ ձեռագրի մէջ, որի թուականը նոյնպէս ծանօթ չէ, այդ առեղծուածի վերայ Դաւիթ Անյաղթի անունն է մակագրուած. այդ լոկ ձեռագրից արտագրած օրինակն է, որ Մ. Էմին հրատարակեց Մով. Խորենացու ռուս. թարգմանութեան ծանօթութիւնների մէջ (տ. Ա. տպ. եր. 369): Մինչ ցայս ծանօթ օրինակները տարբեր են և իրենց ծաւալով: Ընդարձակն այս է (տ. ճռ. 1862).

«Զեռն Ամենակալին ստեղծ զիս.
Եւ Բարձրեալն ի բարձունս ընծայեաց զիս.
Յորժամ ծնայ ես յորովայնէ մաւր իմոյ,
Ես իմաստնացուցի զնա:

---

* Մովսէս Բենեցին ապրում էր ԺԷ. դարում: Մեր սեփական գրչեայ տաղարանի մէջ կայ «Տաղ Բենեցի Մովսէս վարդապետէ ասացեալ ի ժամանակս սրբազան Փիլիպպոս կաթուղիկոսին. Եղեալ հարսն անմահին, երկնաւոր արքային» տնագուխներն յօդում են «Երգ Մովսէսի:»

Զավ ամաց իմոց յառաջն էր երկու երկոտասան.
Եւ այժմ աճեցայ և զարգացայ,
Եւ եմ երեք երկոտասան:

Կամ յարևելս և խօսիմ յարևմուտս.
Ի հիւսիսոյ և հարաւ ընթանամ.
Յանշնչոց ձայն ածեմ, և ի մեռեալս բարբառիմ.
Մեռեալ եմ և ընդ կենդանիս խաւսիմ:
Յանդնդոց ձայն արձակեմ և առ Բարձրեալն
աղաղակեմ:
Անունդ իմ ի Ջրոյ է, և մահ իմ ի նմանէ.
Ի հողոյ սասանիմ, և ի հրոյ զարհուրիմ,
Բայց նստելով ի վէմս, արհամարհեմ զերկոսեան:

Անուն իմ բաղկանայ երիւք տառիւք.
Եռակն յեզակաց . . . Գ.
Երկտասնեակն ի տասնեկաց . . Ի.
Հինգհազարեակն ի հազարաց . . Ր.

Արեսուն և վեց միակ.
Ութ և տասն լծակ.
որ է
Երբեակ երկոտասաներեակ.
Ինն քառեակ,
Եօթն հնգեակ մին թիւ աւելեակ.
Զորս ութեակ և մի նորին կիսակ.
Զորս ինեակ,
Երեք տասնեակ և մի վեցեակ:

Ռնեալոյ են արժանի.
Տարողն յոյժ փոքր.
Տարեալն անհուն,
Տունն ննջող,
Բնակողն անքուն.
Ի միասին գեղեցկագոյն,
Չի ոչ գտաւ նոցա հանգոյն:»

Մ. Էմինի հրատարակութիւնն այսպէս է. «Զեռք Ամենակալին ստեղծին զիս և Բարձրեալն ի բարձանց ի բարձունս ընծայեաց զիս: Զավ հասակի իմոյ երկիցս երկոտասան, այժմ եմ երիցս երկոտասան: Կամ յարևելս և խօսիմ յարևմուտս. ի հիւսիսոյ և ի հարաւոյ բարբառիմ: Անուն իմ բաղկանայ երիւք տառիւք. երբեակն ի միակէն. միակն ի հնգեկեն, և հնգեակն ի հինգ հազարացի: Ծնունդ իմ ի Ջրոյ է և մահ իմ ի նմանէ: Ի հրոյ զարհուրիմ, և ի վէմս նստեալ արհամարհեմ զնոսա: Եթէ կարես ճաշակեա. եթէ չկարես, ի զատ կաց:» Սորա վերնագիրն է «Դաւթի փիլիսոփայի իմաստութիւն:»

Հրատարակուած օրինակների վերջին բաղդատութիւնը 981 թ. ընագրի հետ տե՛ս Արարատ 1902, Թ և Ժ, եր. 964:

19.

Կարապետ վարդապետի այս խրատն օրինակուեցաւ մեր սեփական գրչագրից, որի թուականն է մօտաւորապէս 1381. Նոյն գրչագրի մէջ կան Շնորհալու տաղաչափութիւններն և Ստե-

վանոս Օրբէլեանի Ողբը: Խրատը կցած է այս ողբին կրկին շարունակութիւն, և հարկէ, ջոկ վերնագրով: Նոյն ոտանաւորը խրատի մի այլ օրինակ կայ մեր սեփական գրչեայ տաղարանում, որի թուականն է 1695. այստեղ խրատի միայն մի մասը կայ (Ա.—Լ.): Ուշադրութեան արժանի տարբերութիւններն այս են. 1, խողեցոյց (խոզ եցոյց). 2, նուագող. 3, յառադաստին. 4, յաղդող. 5, գոյնէ. 6, երկեղապէս. 7, յայսմ յաղտէս. 8, ցօղեա. 9, տեսական. 10, գնէը զերկեղ. 11, Որանիէ Բենեհեզա. 12, սաստողաբար. 13, զանմար. 14, գութ. 15, կրկնեմ. 16, թէպէտ. 17, հնազանդութեամբ եղև իշխող:

Հ. Տաշեանի Ցուցակում սոյն խրատն յիշուած է 1644 թուի ձեռագրի նկարագրութեան մէջ. այնտեղից երևում է, որ խրատն ունի և մի յաւելուած 16 տողից բաղկացած, երկտողների գլխատառերն յօդում են «Կարապետէ»: Նոյն խրատը լոյս է տեսել Կ. Պոլիս 1720 թ. և Վենէտիկ 1855 թ. (տ. Ցուց. Վիէն. Մխ. Մատ. 294—296), իսկ թէ որ թուականի գրչութիւնից են հանուած այդ հրատարակութիւնները, մեզ յայտնի չէ:

Թէ որ դարու ծնունդ է Կարապետ վարդապետն և ինչով է յայտնի, տեղեկութիւններ չունինք:

21.

Այս տաղն հրատարակուած է պրոֆ. Մար-

ի նկատողութիւնների մէջ (տ. Изъ лѣтней поѣздка въ Арменій, եր. 23). այդ հրատարակութիւնից ենք հանել այն տողերը, որոնք փակագծի մէջ են և մեր տաղարանում չկան թերատ լինելու պատճառով: Վերնագիրն և առաջին տողը մեր տաղարանի ցանկից ենք առել: Տարբերութիւններն այս են. 1, Վերնագիրն չկը. 2, յերաղ է. 3, մի տեսայ (նոյնն և հետևեալ կրկնութիւնների մէջ). 4, այս տողն չկը. 5, յայն բարակ առուին վերայ. 6, այս տողն չկը. 7, ողկոյզ. 8, այս տողն չկը. 9, ողկուզին. 10, այս տողն չկը. 11, չկը. 12, այս երկտողն չկը. 13, «պատասխանեալ Պաւղոսին». 14, Պետրոս. 15, այս տողն չկը. 16, այս երկտողի փոխարէն «հրեշտակային է տեսիլդ.» 17, այս տողն չկը. 18, չկը. 19, չկը. 20, չկը. 26, ողկոյզ. 27, չկը. 28, չկը. 29, չկը. 30, մխիթարիչ. 31, չկը. վերջին երկտողն է «Պետրոս երաղդ ի բարին, հրեշտակային քո տեսիլդ:»

22.

Այս տաղը մի անթուական ձեռագրից է օրինակուած. մինչև օրս կարելի չեղաւ սորա մի այլ ընագիրը տեսնել: Մայր Աթոռի մի ձեռագրի մէջ, որի թուականն է 1617, սորա մի մասը շատ աննշան տարբերութեամբ կայ, և, երևի, այդ օրինակն է, որ 1899 թուին Արարատի Ա. տետրակում լոյս տեսաւ (ձեռ. № 281): Բաղդատութիւնը թողնում ենք հարցասիրողներին:

Միւս երեք պրակների ցիւրը

Ա. պրակ.

Աւետիս «Աստղ մի ելաւ».
Աւետիս «Այսօր ծնաւ».
Աւետիս «Այս թագաւորս կուսածին».
Աւետիս՝ Յիսուսի մանկութիւնը.
«Վասն գնալոյ յեգիպտոս և աղայութեան և սքանչելեացն Քրիստոսի» Ղազար Սեամբօլցի.
Աւետիս՝ Նաւավարն.
Վասն Զուղայեցի Նազարէթին.
«Վասն Էջմիածնայ Նուիրակներուն»,
Յովհաննէս քահանայի.
«Յաղագս քաղաքին Ամասիու»,
Մարտիրոս Ղրիմեցի.
Վասն Թռչնոց, Յովհաննէս եպիսկոպոս.
Ի վերայ աղուէսին.
Տաղ սիրոյ «Նազլու տիլբաբս», Ստեփաննոս.
«Առաւօտուն քամեկն», Օսիպ տէրտէր.
«Վասն հէրիսի», Մինաս Թոխաթցի.
Վասն ակռայի.
Վասն ուրախութեան.
Ի վերայ ճանճի.
Վասն թիւթիւնի
Տաղ գեղեցիկ աղնիւ.

Բ. պրակ.

Տաղ դարձեան «Մարտն կուգայր», Մուրաս Խիկար.
«Հա՜ մտաք յամիս մարտին», Տէր Թադոս.
Տաղ դարձեան «Աշուն էր եղև դարուն», Ստեփաննոս.
Տաղ ի վերայ վարդին և անուշահոտ ծաղկանց.
Տաղ վասն վարդի «Պիւլպիւլն է հաղեր», Կարապետ.
Տաղ վասն վարդի «Գարուն է բացուեր», Յակոբ
«Ահա՜ եղև օրհնեալ դարուն», Աւետիք.
«Ծով աչք», Ղազար.
«Ե՛կ իմ սիրուն սիրելագոյն», Մովսէս.
Տաղ վասն ծիծաղելոյ «Գայլն, արջն ու աղուեսուկն».
Տաղ վասն ագռաւի «Մեր մեղքն է արեր».
Տաղ վասն չախուի «Սիրտս ի փորս», Մարտիրոս.
Տաղ վասն մահրամայի «Աստուած արար», Առաքել.
Վասն խաղողի «Այն առաջին ժամանակին», Աստուածատուր.
«Խաղող գքեզ գովել պիտի».
«Այսօր խմենք քաղցր և յորդոր», Մարտիրոս.
Այսօր տօնենք, ձեզ աւետիս, Մարտիրոս.
«Ասի թէ սիրեմ գքեզ».
«Ա՜յ իմ մարգարէ շարոց».
Երգ եարոջ «Գիշերս ես ի դուրս ելայ».
«Հովերով սէր».
Մանուկն և ջուրն «Այդ վայրն լեռնէդ».
«Գուղալ մ'ես երէկ տեսայ».

Գովասանք ծաղկանց «Օրհնեալ ես դու Հայը»,
Դաւիթ Սալաձորցի.

Գ. պրակ.

«Վարդն է բացուելը», Վարդան.
«Ե՛կ սիրելի՛ ուրախացուք», Խաչատուր Երէց.
«Ալ վայ եկին ան հաւերն».
«Խաչէնցիկ, Նարկիզ», Խաչատուր.
«Քանի որ տեսնեմ զքեզ».
«Բաներս քեզ ասեմ».
«Քո սէրդ իմ սրտիս».
«Մեր Տէրն է բազմելը».
«Այս կեանքն է յերազ նման»,
Խաչատուր Կեչառեցի.
«Կանանց ա՛ղդ լացէ՛ք», Նոյն.
«Օրհնեալ անուն անմահ բանին»,
Յովհաննէս Թլկուրացի.
«Կ՚ուզես որ ապիզ կենաս», Ցրիկ.
«Ցիշէ՛ զբան աւետարանին», Նոյն.
«Տեսայ իմ հոգուս հոգին».
«Սիրով ուրախութեան ժամ է», Սիմէոն.
«Ծով ա՛չք», Ղազար Սեբաստացի.
«Այն առաջին ժամանակին», Աստուածատուր.
«Խաղո՛ղ զքեզ գովել պիտի»,
Սարկաւագ Բերդակացի.

ԵՐԳԻՉՆԵՐԻ ԱՑՐԲԵՆԱԿԱՆ ՑԱՆԿԸ

Ա.—Դ. պր.

Աղարիա Զուղայեցի, Դ. 10, 11, 12 և 13.
Առաքել Դաւրիժեցի, Բ. 10.
Աստուածատուր, Բ. 11. Գ. Է. և 17.
Աւետիք պատրիարք, Բ. 5 ծնթ.
Աւետիք Օգոստին, Դ. 20.
Գալուստ Կայծակն, Դ. 10 ծնթ։
Դաւիթ Անյաղթ, կամ Քերթող, Դ. 13 ծնթ. Գ.
Դաւիթ Սալաձորեցի, Բ. 17.
Թադոս, Բ. 1. ծնթ. Գ. Զ.
Խաչատուր Խարբերդցի, Գ. Ժ. 4. Դ. 1.
Խաչատուր Կեչառեցի, Գ. Թ. 9 և 10.
Խասպէկ երէց, Ա. 3. Գ. Զ. Ժ. և 2.
Կարապետ, Բ. 4.
Կարապետ վարդապետ, Դ. 19.
Ղազար Սեբաստացի, Բ. 6. Գ. Է. Ժ. 8. ծնթ. և 16.
Ղազար Ստամպոլցի, Ա. 5.
Մարտիրոս Խարասարցի, Բ. 11 ծնթ. Գ. Ը. Դ. 5, 6, 7 և 8.
Մարտիրոս Խարբերդցի, Բ. 9. Գ. Ե. Դ. ծնթ.
Մարտիրոս Ղրիմեցի, Ա. 9. Դ. 9.

Մինաս Թոխաթցի, Ա. 14.
Մովսէս, Բ. 6. ծնթ.
Մովսէս Բճնեցի, Դ. 13 ծնթ. Գ.
Մուրատ Խիկար, Բ. 1. Գ. Զ.
Յակոբ Արծկէացի, Բ. 5. Գ. Զ.
Յակոբ Սսեցի, Դ. Զ.
Յովհաննէս, Դ. 4.
Յովհաննէս Եպիսկոպոս, Ա. 10.
Յովհաննէս Երզնկացի, Դ. 3.
Յովհաննէս Թլկուրանցի, Գ. Ը. Թ. Ժ և 11.
Յովհաննէս քահանայ, Ա. 8.
Յովսէփ Աղթամարցի, Դ. 7.
Սարկաւագ Բերդակացի, Բ. 11 ծնթ. Գ. Է. Ժ և 18.
Սարկաւագ, Բ. ծնթ.
Սիմէոն Խրրմպէյի որդի, Ա. 16. Գ. Է. Ժ և 15.
Ստեփաննոս, Ա. 12. Բ. 2.
Ստեփաննոս Թոխաթցի, Ա. 17. Գ. Զ.
Վարդան, Գ. Ժ. 1.
Փուչակ Նահապետ, Ա. 19 ծնթ. Բ. 16. Գ. 14 ծնթ.
Օքսիդ Տէրտէր, Ա. 13.
Ֆրիկ, Գ. Ժ. 12 և 13.

ՊԵՏԱԿԱՆ-ՀՈՍՐՈՎԱՐ
ԳՐԱԴԱՐԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0348546

36,521